Մոնիտորինգի հաշվետվություն

Համաձայնագիր Եվրոպական Միության և Հայաստանի Հանրապետության միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին (երկրորդ մոնիտորինգ)

Երևան, 2015

ՀՏԴ 327
ԳՄԴ 66.4(0)
Մ 881

Ծրագիրն իրականացվել է Գլոբալիզացիայի եւ տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնի կողմից (ԳՏՀՎԿ):

Զեկույցի հեղինակներ՝ Ստեփան Գրիգորյան
Նիկոլայ Իսրայելյան
Տեքստի թարգմանիչ՝ Խաչատուր Ադումյան

Մ 881 **Մոնիտորինգի հաշվետվություն** /Համաձայնագիր Եվրոպական Միության և Հայաստանի Հանրապետության միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին (երկրորդ մոնիտորինգ).- Եր.: Էդիթ Պրինտ, 2015. - 64 էջ:

Զեկույցի հեղինակները շնորհակալություն են հայտնում Իրինա Սուշկոյին և Մարյանա Կուզիոյին՝ զեկույցի վերաբերյալ օգտակար եւ կարեւոր մեկնաբանությունների համար:

Ուսումնասիրությունը իրականացվել է Բաց հասարակության հիմնադրամներ- Հայաստան կազմակերպության ֆինանսական աջակցությամբ:

Սույն զեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և հաստատված չեն Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի կամ նրա խորհրդի կողմից: Սույն զեկույցի բովանդակությունը կարող է չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի տեսակետներին: Սույն զեկույցի պատրաստումը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ դրամաշնորհ N 18906:

ՀՏԴ 327
ԳՄԴ 66.4(0)

ISBN 978-9939-75-028-6

© ԳՏՀՎԿ, 2015, www.acgrc.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3
Մեթոդաբանություն 12
Գլուխ առաջին՝ Եվրոպական Միության և Հայաստանի Հանրապետության միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագիր՝ դրույթներ և պրակտիկա 17
Գլուխ երկրորդ՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության միգրացիոն պետական ծառայություն 42
Վերջաբան 54
Հղումներ 62

Ներածություն

ԵՄ-ՀՀ հարաբերությունների զարգացման դինամիկան վիզաների տրամադրումը դյուրացնելու ոլորտում

Ինչպես գիտենք ՀՀ-ԵՄ հարաբերությունների օրակարգում էական փոփոխություններ տեղի ունեցան 2013թ. սեպտեմբերի 3-ի ՀՀ Նախագահի կողմից արված հայտնի հայտարարությունից հետո: Հայաստանը դադարեցրեց ԵՄ-ի հետ ասոցացման շուրջ տարվող բանակցություններն ու սկսեց Մաքսային միությանն ու Եվրասիական տնտեսական միությանն անդամագրվելու գործընթացը:

Ինչպես ցույց տվեց ժամանակը, ՀՀ-ԵՄ հարաբերություններում ամենակարևոր ոլորտներից մեկը մնաց մուտքի արտոնագրերի ստացման և ռեադմիսիայի հետ կապված ոլորտը, Եվրոպական Միության և Հայաստանի Հանրապետության միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին և առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին համաձայնագրերի կատարման հարցը, ինչպես նաև վիզաների ազատականացման երկրորդ փուլին՝ վիզա երկխոսությանը (Visa Dialogue) անցնելու հնարավորությունը և կողմերի պատրաստակամությունը: Շարժունությունը և վիզաների հեշտացման գործընթացը նաև հնարավորություն կտա Հայաստանում մի շարք ոլորտներում (ինչպիսիք են անօրինական միգրացիան, անվտանգությունը, փաստաթղթերի ու անձնական տվյալների պաշտպանվածությունը, սահմանների անվտանգությունը և կառավարումը, կազմակերպված հանցավորության, ահաբեկչության, խտրականության, կոռուպցիայի դեմ պայքարն ու կանխարգելումը, մարդու իրավունքների ոլորտի բարելավումը ներառյալ «Խտրականության դեմ» օրենքի ընդունումը, համագործակցությունը իրավապահ մարմինների միջև և այլն) բարեփոխումների իրականացման: Պետք է նշել, որ Գլոբալիզացիայի եւ տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնի (ԳՏՀՎԿ) կողմից անցկացված առաջին մոնիտորինգը[1] ցույց տվեց Հայաստանի կառավարության և Եվրոպական հանձնաժողովի կողմից կատարած բավականին հաջող աշխատանքը ԵՄ և ՀՀ

[1] http://acgrc.am/bokeng.pdf

միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին և առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին համաձայնագրերի իրականացման հարցում:

Այդ մասին է վկայում նաև 2015թ. հուլիսի 20-ին Հայաստանի Հանրապետություն կատարած այցի ընթացքում Եվրոպական խորհրդի Նախագահ Դոնալդ Տուսկի ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի հետ բանակցությունների արդյունքների վերաբերյալ արած հայտարարությունը, որտեղ, մասնավորապես, ընդգծվում էր շարժունության ոլորտում Հայաստանի գրանցած հաջողությունների և ԵՄ-ի հետ համագործակցությունը շարունակելու ու խորացնելու անհրաժեշտության մասին՝ դա կապելով սոցիալական և քաղաքական բարեփոխումների, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ոլորտների բարելավման հետ, ինչպես նաև այդ բարեփոխումների գործընթացում քաղաքացիական հասարակության ներգրավման հետ [1] :

Այդ հարցի կարևորությունը ընդգծվեց նաև 2015թ. մայիսի 21-22 կայացած Ռիգայի գագաթաժողովի Հռչակագրի մեջ, որի 23-րդ կետում (Շարժունակություն և միջանձնային կապեր) նշվում էր. «Գագաթաժողովի մասնակիցները վերահաստատում են, որ քաղաքացիների ընդլայնված շարժունակությունը ապահով և լավ կառավարվող միջավայրում մնում է Արևելյան գործընկերության հիմնական նպատակը: Սա կնպաստի ավելի հեշտ և ավելի հաճախ տեղաշարժին, գործնական և միջանձնային կապերին: … Նրանք ողջունում են առ այսօր համապատասխանաբար Հայաստանի կողմից Վիզաների դյուրացման և ռեադմիսիայի համաձայնագրերի իրականացման հարցում գրանցած հաջողությունը: Նրանք ակնկալում են ապագայում՝ պատշաճ ժամանակ, Հայաստանի հետ քննարկել վիզայի վերաբերյալ երկխոսության մեկնարկը, այն դեպքում, եթե Հայաստանը շարունակի ապահովել կայուն առաջընթաց Վիզաների դյուրացման և ռեադմիսիայի համաձայնագրի իրականացման հարցում»[2]:

---

[1] http://www.president.am/hy/interviews-and-press-conferences/item/2015/07/20/President-Serzh-Sargsyan-answers-at-press-conference-with-Donald-Tusk/

[2] http://armedia.am/static/content/european_union/Riga_summit_Declaration.pdf ; http://acgrc.am/Riga%20Declaration%20220515%20Final.pdf

Անձի ազատ տեղաշարժի իրավունքը

Սույն ծրագրի շրջանակներում իրականացված մոնիտորինգը առնչվում է մարդու, անձի հիմնարար ազատություններից մեկի՝ ազատ տեղաշարժի իրավունքի հետ: 1948թ. դեկտեմբերի 10-ին ընդունված «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 13-րդ հոդվածը սահմանում է. «Յուրաքանչյուր ոք ունի տվյալ պետության սահմաններում ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի ցանկացած՝ այդ թվում սեփական երկրից մեկնելու և իր երկիրը վերադառնալու իրավունք»[1]: «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950թ. նոյեմբերի 4-ին ընդունված կոնվենցիան կից արձանագրություններով էլ ավելի է կոնկրետացնում հիշյալ իրավունքի իրականացման շրջանակները, սահմանում այն հիմքերը, որոնց առկայությամբ կարող է արդարացվել տեղաշարժի ազատության իրավունքի սահմանափակումը[2]: Հարկ է նշել, որ տեղաշարժի ազատությունը չի ներառում կամայական ընտրությամբ որևէ երկիր մուտք գործելու ընդհանուր, համընդհանուր իրավունք, չնայած դա տեղաշարժի ազատության իրավունքի հենց այն բացակայող բաղադրիչն է, որը մարդիկ շատ հաճախ ցանկանում են ունենալ: Բացի այդ, ընդունված միջազգային նորմերի համաձայն, օտարերկրացուն մուտքի իրավունքի տրամադրումը համարվում է տվյալ երկրի ինքնիշխան իրավունքներից մեկը, և այն օտարերկրացիները, որոնք, տվյալ երկրի օրենսդրությամբ սահմանված կանոնները խախտելով, մուտք են գործում կամ գտնվում (բնակվում են) այնտեղ, համարվում են անօրինական միգրանտներ: Անօրինական միգրանտի կարգավիճակում անձը կարող է հայտնվել թե՛ անօրինական ճանապարհով երկիր մուտք գործելու (մուտք առանց օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերի, կեղծ փաստաթղթերի ներկայացում, մուտք երկիր ոչ սահմանային անցակետերով և այլն), և թե՛ օրինական ճանապարհով երկիր մուտք գործելու, սակայն թույլատրելի ժամկետից ավելի մնալու պարագայում[3]:

---

[1] http://www.un.am/res/Human%20Rights/Armenian%20Documents/UDHR_arm.pdf
[2] http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=20870
[3] http://www.smsmta.am/?menu_id=31

Մարդու ազատ տեղաշարժվելու իրավունքը ամրագրվում է նաև ՀՀ Սահմանադրությամբ (Գլուխ 2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները), որտեղ, մասնավորապես, նշվում է, որ «Յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու իրավունք» և «Յուրաքանչյուր քաղաքացի եւ Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետություն վերադառնալու իրավունք»[1] :

ԵՄ-ՀՀ համագործակցությունը Արևելյան գործընկերության ծրագրի շրջանակներում

Ինչպես հայտնի է, Արևելյան գործընկերություն ծրագիրը մեկնարկել է 2009թ. մայիսի 7-ին Պրահայում կայացած ԵՄ եւ Արևելյան գործընկեր պետությունների (Վրաստան, Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Ուկրաինա, Մոլդովա) ղեկավարների գագաթնաժողովով, որի ընթացքում ընդունվել է համատեղ հռչակագիր[2]: 2010թ. հուլիսին մեկնարկեցին ՀՀ-ԵՄ Ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցությունները, իսկ 2012թ. Հունիսին՝ Ասոցացման համաձայնագրի մաս կազմող Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու վերաբերյալ բանակցությունները, որոնք ավարտվեցին 2013թ. հուլիսին:

Արևելյան գործընկերության շրջանակներում բազմակողմ համագործակցությունն իրականացվում է չորս տարբեր թեմատիկ պլատֆորմների միջոցով՝ ժողովրդավարություն, արդյունավետ կառավարում եւ կայունություն, տնտեսական ինտեգրում եւ համապատասխանեցում ԵՄ քաղաքականության հետ, էներգետիկ անվտանգություն, մարդկանց միջև շփումներ[3]:

Արևելյան գործընկերության շրջանակներում համագործակցության չորս թեմատիկ պլատֆորմներից մեկը հանդիսանում է մարդկանց միջև շփումները, ինչը ՀՀ քաղաքացիների ԵՄ տարածք մուտք գործելու համար

[1] http://www.parliament.am/parliament.php?id=constitution

[2] Joint Declaration of the Prague Eastern Partnership Summit- http://ec.europa.eu/europeaid/where/neighbourhood/eastern_partnership/documents/prague_summit_declaration_en.pdf

[3] http://mfa.am/hy/country-by-country/eu/

ենթադրում է մուտքի արտոնագրի /նաև ԵՄ Շենգեն համաձայնագրերի դրույթները կիրառող ԵՄ ոչ անդամ-երկրների դեպքում/ ստացում: Կարևորելով ՀՀ-ԵՄ հարաբերությունների վերոհիշյալ ոլորտը 2012թ. փետրվարին Երևանում մեկնարկեցին ԵՄ հետ մուտքի վիզաների դյուրացման և հետընդունման համաձայնագրերի շուրջ բանակցությունները: Բանակցությունների երեք փուլերից հետո 2012թ. դեկտեմբերի 17-ին Հայաստանի և ԵՄ միջև ստորագրվեցին Վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագիրը, իսկ 2013թ. ապրիլի 19-ին՝ հետընդունման մասին համաձայնագիրը[1]: Այդ համաձայնագրերը վավերացվեցին Եվրոպական խորհրդարանի կողմից 2013թ. հոկտեմբերի 9-ին, իսկ ՀՀ Ազգային ժողովի կողմից 2013թ. նոյեմբերի 12-ին՝ ուժի մեջ մտնելով 2014թ. հունվարի 1-ից[2]:

ՀՀ կառավարության 04.10.2012 N 1255-Ն որոշմամբ Եվրոպական Միության անդամ-պետությունների և Եվրոպական Միության Շենգենյան դրույթները կիրառող՝ Եվրոպական Միության ոչ անդամ պետությունների քաղաքացիների համար 2013 թվականի հունվարի 10-ից սահմանվել է առանց մուտքի վիզայի այցելությունների ռեժիմ, ինչը շատ կարևոր և ողջունելի քայլ էր Հայաստանի կոմից[3]:

Ինչպես վերը նշվեց 2013թ. սեպտեմբերի 3-ին Հայաստանը դադարեցրեց ԵՄ-ի հետ ասոցացման շուրջ տարվող բանակցություններն ու սկսեց Մաքսային միությանն ու Եվրասիական տնտեսական միությանն (ԵՏՄ) անդամագրվելու գործընթացը: Իսկ արդեն 2015թ. հունվարի 2-ին Հայաստանը միացավ Եվրասիական տնտեսական միությանը. ուժի մեջ մտավ Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցության պայմանագիրը և Հայաստանը Բելառուսի, Ղազախստանի եւ Ռուսաստանի հետ միասին դարձավ ԵՏՄ լիիրավ անդամ[4]:

Արտաքին քաղաքականության վեկտորի նման կտրուկ փոփոխությունը հանգեցրեց նրան, որ ԵՄ-Հայաստան հարաբերությունները սահ-

---

[1] http://www.mfa.am/hy/country-by-country/eu/

[2] http://www.europarl.europa.eu/news/en/news-room/content/20131004IPR21533/html/Visas-Parliament-gives-green-light-to-EU-Armenia-visa-facilitation-agreement , http://armenianow.com/news/49985/armenia_eu_visa_facilitation_readmission_agreement_parliament_ratification

[3] http://www.mineconomy.am/arm/135/1/news.more.html

[4] http://www.eurasiancommission.org/hy/nae/news/Pages/02-01-2015-1.aspx

մանափակվեցին հիմնականում հումանիտար, գիտական, կրթական, մշակութային ոլորտներում համագործակցությամբ: Իսկ քանի որ վերոհիշյալ ոլորտներում համագործակցությունը նախատեսում է մարդանց ակտիվ տեղաշարժ, շարժունություն, ապա կարելի է եզրակացնել, որ վիզաների ոլորտը դառնում է չափազանց կարևոր: Այս իրավիճակը կպահպանվի, համենայնդեպս, մինչև ՀՀ-ԵՄ համագործակցության նոր ձևաչափի ձևավորումը:

Շատ կարևոր էր նաև 2015թ. հոկտեմբերի 12-ին ԵՄ-ի կողմից կայացրած որոշումը, որով ԵՄ Արտաքին հարաբերությունների խորհուրդը Եվրոպական Հանձնաժողովին և ԵՄ Բարձր ներկայացուցչին լիազորեց Հայաստանի հետ բանակցություններ սկսել նոր, համապարփակ և իրավական ուժ ունեցող համաձայնագրի շուրջ և ընդունեց բանակցությունների համար համապատասխան մանդատ: Այս համաձայնագիրը կփոխարինի Եվրամիության և Հայաստանի միջև կնքված Գործընկերության և համագործակցության մասին ներկայիս համաձայնագիրը: Եվրոպական միությունը իր պատրաստակամությունն է հայտնում շարունակել զարգացնել և ամրապնդել Հայաստանի հետ իր համագործակցությունը՝ Արևելյան գործընկերության շրջանակներում երկուստեք հետաքրքրություն ներկայացնող բոլոր ոլորտներում: Այդ բանակցությունները պաշտոնապես մեկնարկել են 2015թ. դեկտեմբերի 7-ին[1]:

Մեր դիտարկումները

Այսպիսով, 2014թ. հունվարին ուժի մեջ մտան վերոհիշյալ երկու համաձայնագրերը, որոնց հիմնական նպատակն է կանոնակարգել և հեշտացնել ՀՀ քաղաքացիների մի շարք կատեգորիաների համար վիզաների տրամադրման և վերադարձման հետ կապված խնդիրները: Սակայն հարկ է նշել ընդհանուր առմամբ ողջ հասարակության մոտ այդ հարցերի ու նոր կանոնների մասին տեղեկացվածության ցածր մակարդակի մասին, ինչը շատ դեպքերում բերում է քաղաքացիների իրավունքների ոտնահարման կամ խախտման: Հաշվի առնելով տեղեկացվածության ցածր մակարդակը՝ կարևորագույն խնդրիր է դառնում նաև ԶԼՄ-ների

[1] http://eeas.europa.eu/delegations/armenia/press_corner/all_news/news/2015/2015_10_13_hy.htm

տեղեկացվածության բարձրացման հարցը, քանի որ, ինչպես գիտենք, հենց նրանք են հանդիսանում հասարակության գիտակցության ձևավորման ամենաազդեցիկ գործիքներից մեկը: Տեղեկատվածության ցածր մակարդակը նաև պատճառ է մարդկանց մոտ ԵՄ-ի նկատմամբ բացասական վերաբերմունքի, կարծրատիպային մտածելակերպի ձևավորմանը: ԵՄ-ն և ՀՀ-ը վիզաների ոլորտում կատարել են ծավալուն աշխատանք, այդ իսկ պատճառով շատ կարևոր է, որ արդյունքները ավելի տեսանելի և շոշափելի լինեն:

Սույն ծրագրի շրջանակներում Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնը ելնելով ՀՀ և ԵՄ միջև երկխոսության, մասնավորապես, ՀՀ-ի և ԵՄ-ի միջև մուտքի արտոնագրերի տրամադրման և հետընդունման ոլորտներում ուսումնասիրության հարուստ փորձից և հաշվի առնելով վերոհիշյալ ոլորտներում ՀՀ-ի գրանցած հաջողություններն ու Վիզաների ազատականացման հաջորդ փուլի՝ Վիզաների երկխոսության անցման հնարավորությունը, նախաձեռնել և ներկայացրել է նաև Հայաստանի և Եվրոպական Միության միջև սիմետրիկ /համաչափ/ առանց վիզայի ռեժիմի ճանապարհային քարտեզի կազմման ու իրականացման համար առաջարկություններ[1]: Հետազոտությունը իրականացվել է Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնի փորձագետների ու միջազգային փորձագետ, «Եվրոպան առանց խոչընդոտների» քաղաքացիական նախաձեռնության /Ուկրաինա/ ղեկավար Իրինա Սուշկոյի կողմից: Նշենք նաև, որ այս առաջարկություններին միացել են նաև քաղաքացիական հասարակության հետևյալ կազմակերպությունները՝ Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան, Լրագրողների «Ասպարեզ» ակումբ, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, Հայաստանի հելսինկյան կոմիտե, Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն: Հատկանշական է, որ նման առաջարկություններ առաջին անգամ է, որ ներկայացվում են քաղաղացիական հասարակության կողմից: Սույն ծրագրի ընթացքում մեր կողմից կազմած Վիզա երկխոսության հնարավոր անցման առաջարկությունների և 2015թ. հունիսին Ծաղկաձորում կազմակերպած տեղեկատվական սեմինարի

[1] http://www.acgrc.am/publications.html

մասին ինֆորմացիան տեղադրված է Միգրացիայի պետական ծառայության (ՄՊԾ) կայքում և պաշտոնական տեղեկագրում, ինչպես նաև Եվրոպան առանց վիզաների կոալիցիայի կայքում[1]:

Հայաստանի և Եվրոպական Միության միջև սիմետրիկ /համաչափ/ առանց վիզայի ռեժիմի ճանապարհային քարտեզի կազմման ու իրականացման համար առաջարկությունները ներկայացվել են ՀՀ համապատասխան պետական կառույցներին, ՀՀ-ում ԵՄ պատվիրակությանը, ՀՀ-ում օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչություններին, քաղաքացիական հասարակության կազմակերպություններին և այլն: 2015թ. մայիսի 7-ին ԳՏՀՎԿ-ի կողմից կազմակերպված վերոհիշյալ առաջարկությունների շնորհանդեսին ներկա են գտնվել ՀՀ-ում ԵՄ պատվիրակության ղեկավարը, ՀՀ-ում եվրոպական երկրների մի շարք դեսպաններ և այլ հյուրեր: Կարևոր է նաև, որ այդ առաջարկությունները տեղադրվել են ՀՀ-ում ԵՄ պատվիրակության պաշտոնական կայքում: Իսկ 2015թ. Նոյեմբերի 4-ին տեղի ունեցավ ԵՄ-Հայաստան Համագործակցության կոմիտեի 16-րդ նիստը, որի ընթացքում կողմերը քննարկեցին նաև ԵՄ-Հայաստան համագործակցության ապագա համաձայնագրին առնչվող մի շարք հարցեր, որտեղ ևս մեկ անգամ շեշտվեց վիզաների երկխոսության հարցը որպես ՀՀ-ԵՄ հարաբերությունների օրակարգի կարևոր հարցերից մեկը:

Վիզայի տրամադրումը դյուրացնելու և ռեադմիսիայի մասին համաձայնագրերը արդեն գործում են մոտ երկու տարի և այս Ծրագրի շրջանակներում կատարած մոնիտորինգը թույլ տվեց վերլուծել առկա իրավիճակը, եզրակացություններ անել դրանց ազդեցության մասին:

ԵՄ-ի հետ կնքած համաձայնագրերի հաջող իրականացման համար, ինչպես նաև վիզաների ազատականացման շարունակման ուղղությամբ շարժվելու համար անհրաժեշտ է բոլոր գործող սուբյեկտների՝ Հայաստանի պետական մարմինների, ողջ հասարակության, հատկապես, հասարակության ակտիվ խմբերի, ինչպես նաև եվրոպական մարմինների կողմից հետևողական աշխատանք:

---

[1] http://visa-free-europe.eu/2015/08/recommendations-on-forming-and-implementing-the-road-map-to-the-symmetrical-visa-free-regime-between-the-eu-and-armenia/; http://www.smsmta.am/?show_news&news_id=478

Մեթոդաբանություն
/2015թ. մոնիտորինգի մեթոդաբանություն/

Սույն ուսումնասիրության ընթացքում օգտագործվել են հետևյալ մեթոդները.

1. **Հայկական ու եվրոպական համապատասխան օրենսդրության վերլուծություն**

   Ուսումնասիրվել է ոլորտին վերաբերող թե՛ միջազգային, թե՛ ներպետական օրենսդրությունը: Նախ և առաջ ուսումնասիրվել են Եվրոպական Միության և Հայաստանի Հանրապետության միջև վիզայի տրամադրումը դյուրացնելու և առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին համաձայնագրերը[1], ԵՄ Վիզայի օրենսգիրքը (EU Visa Code)[2], Շենգեն համաձայնագրերը (Schengen Agreements)[3], Դուբլինյան կոնվենցիան[4] և այլն: Ներպետական փաստաթղթերից ուսումնասիրվել են «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքը, ՀՀ ԱԳՆ տարեկան հաշվետվությունները, միգրացիային և ռեադմիսիային վերաբերող ՀՀ կառավարության մի շարք որոշումներ և այլն:

2. **ՀՀ-ում ԵՄ հյուպատոսությունների, ՀՀ-ում գործող վիզաների կենտրոնների և ՀՀ համապատասխան պետական կառույցների կայքերի մոնիտորինգ**

   Ծրագրի ընթացքում ուսումնասիրվել են ՀՀ-ում եվրոպական երկրների դիվանագիտական ներկայացուցչությունների հյուպատոսական բաժինների, ՀՀ-ում գործող վիզաների կենտրոնների, ՀՀ-ի ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության միգրացիոն պետական ծառայության պաշտոնական կայքերը:

---

[1] http://mfa.am/u_files/file/Agreement_EU_Readmissiom_Arm.pdf
[2] http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:L:2009:243:0001:0058:EN:PDF
[3] http://ec.europa.eu/dgs/home-affairs/e-library/documents/policies/borders-and-visas/schengen-agreements/index_en.htm
[4] http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:41997A0819(01)&from=EN

Ուշադրություն ենք դարձրել վերոհիշյալ հաստատությունների կայքերի ուսումնասիրությանն ու պարունակող տեղեկատվության վերլուծությանը՝ կարևորելով նաև ժամանակակից աշխարհում համացանցից տեղեկությունների ստացման հնարավորությունը: Համացանցից օգտվողների գերակշռող մեծամասնություն կազմում են երիտասարդությունը և միջին տարիքի անձինք, որոնք էլ կազմում են հասարակության առավել ակտիվ ու հաճախ տեղաշարժվող մասը: Այդ իսկ պատճառով կայքերը դառնում են տեղեկատվության ստացման ամենակարևոր աղբյուրը, որոնք պետք է պարունակեն ամենաթարմ տեղեկությունները, ինչը հատկապես կարևոր է վիզաների ու միգրացիայի հարցում:

3. Հարցումներ (հարցերը տե՛ս ստորև)

Օրենսդրության ու գործող կանոններին ծանոթանալուց հետո ծրագրի իրականացման առաջին փուլում կազմվել են հարցեր՝ ուղղված ոլորտի համար պատասխանատու պետական մարմիններին ու ԵՄ անդամ-երկրների դիվանագիտական ներկայացուցչությունների հյուպատոսական բաժիններին և Հայաստանում գործունեություն ծավալած վիզաների կենտրոններին: Հարցերը կազմվել են, հաշվի առնելով թեմայի հասարակության լայն շերտերի համար վիզաների և միգրացիայի կարևորությունը, հատկապես առօրյայում, մամուլում առավել հաճախ հանդիպող խնդիրներն ու դեպքերը, ինչպես նաև 2014 թվականի համանման մոնիտորինգի ընթացքում ծագած հարցերը[1]: Անհատական հանդիպումներ են անցկացվել նաև մի շարք ազգային և միջազգային փորձագետների հետ (Գերմանիա, Լեհաստան, Լիտվա, Ուկրաինա, Վրաստան և Մոլդովա):

Առաջին անգամ հարցումներ են անցկացվել նաև Շենգեն գոտի մուտքի վիզայի հարցում մերժում ստացած դիմորդների շրջանում՝ ընդհանուր պատկերը ավելի ճիշտ հասկանալու համար:

[1] http://arm.acgrc.am/bookarm.pdf

4. **Հայաստանի և Եվրոպական միության միջև սիմետրիկ /համաչափ/ առանց վիզայի ռեժիմի ճանապարհային քարտեզի կազմման ու իրականացման համար առաջարկություններ**

Ի նկատի ունենալով այն, որ Հայաստանը հաղթահարել է ԵՄ-ի հետ վիզաների ազատականցման առաջին փուլը և հնարավորություն կա անցնելու երկրորդ փուլին՝ վիզաների երկխոսությանը /Visa Dialogue/, կազմվել են նաև առաջարկություններ վիզա երկխոսության անցնելու հետ կապված՝ «Առաջարկություններ Հայաստանի և Եվրոպական Միության միջև սիմետրիկ /համաչափ/ առանց վիզայի ռեժիմի ճանապարհային քարտեզի կազմման ու իրականացման համար»:

5. **Էլեկտրոնային մամուլի մշտադիտարկում**

Հաշվի առնելով այն, որ համացանցը տեղեկատվություն ստանալու հիմնական աղբյուրներից մեկն է, ինչպես նաև, որ հասարակությունում շատ ցածր է տեղեկացվածության մակարդակը, կատարվել է նաև էլեկտրոնային մամուլի մշտադիտարկում, ինչը թույլ է տվել կատարել նշված ոլորտների համեմատական վերլուծություն և հետևել, թե ինչպես են լուսաբանվում այս կամ այն իրադարձությունները լրատվամիջոցներում: Մշտադիտարկման համար ընտրվել են առավել շատ ընթերցվող լրատվական կայքերը: Պետք է նշել, որ առանց էլեկտրոնային մամուլի մշտադիտարկման մեր վերլուծությունը կլիներ թերի և միակողմանի, քանի որ հենց լրատվամիջոցներն են հանդիսանում հասարակության համար լրատվության ստացման աղբյուր, և նրանց կողմից ճշգրիտ տեղեկությունների տարածումը շատ կարևոր է:

6. **Վիճակագրական փաստաթղթերի ուսումնասիրություն**

Ուսումնասիրվել են ԵՄ վիզաների հետ կապված վիճակագրական տվյալները, ինչպես նաև այս ոլորտում Արևելյան գործընկերություն ծրագրի մյուս երկրների փորձը, որոնք արդեն հաղթահարել են վիզայի ազատականացման առաջին փուլը /Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան/, իսկ որոշ դեպքերում /ինպես, օրինակ՝ Մոլդովան/ հաջողությամբ հասել ԵՄ-ի հետ առանց վիզայի ռեժիմի:

Սույն ծրագրի շրջանակներում իրականացվել է ԵՄ մուտքի արտոնագրերի (խոսքը միայն մինչև 90 օր վավերականությամբ վիզաների մասին է) ստացման հետ կապված ոլորտի համապարփակ ուսումնասիրություն: Այդ նպատակով ուսումնասիրվել են ոլորտին վերաբերող միջազգային և ներպետական օրենսդրությունը, այդ թվում՝ Եվրոպական Միության և Հայաստանի Հանրապետության միջև վիզայի տրամադրումը դյուրացնելու և առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին համաձայնագրերը, կատարվել է նաև Հայաստանում գործող ԵՄ անդամ պետությունների դիվանագիտական առաքելությունների և հյուպատոսական հիմնարկների (Գերմանիա, Լեհաստան, Ֆրանսիա, Իտալիա, Լիտվա, Հունաստան, այս տարի առաջին անգամ նաև՝ Չեխիա, Ռումինիա և Բուլղարիա), ինչպես նաև Հայաստանում Հունաստանի վիզաների կենտրոնի, Հայաստանում Լիտվայի վիզաների կենտրոնի (նշենք, որ ս.թ. հոկտեմբերին բացվել է նաև Իտալիայի վիզաների կենտրոնը), ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության և ՀՀ Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության (ՀՀ ՏԿԱԻՆ) Միգրացիայի պետական ծառայության աշխատանքի ուսումնասիրություն (ՄՊԾ): Ծրագրի առաջին փուլում ուսումնասիրվել են նաև Գերմանիայի, Լեհաստանի, Ֆրանսիայի, Իտալիայի, Լիտվայի, Հունաստանի, Չեխիայի, Ռումինիայի և Բուլղարիայի հյուպատոսական բաժինների, վիզաների կենտրոնների, ինչպես նաև վերոհիշյալ ՀՀ ներպետական մարմինների պաշտոնական կայքերը: Այնուհետև կազմվել են հարցաշարեր՝ ուղղված համապատասխան երկրների հյուպատոսական բաժիններին, վիզաների կենտրոններին և ՀՀ ներպետական մարմիններին, որոնց պատասխանները թույլ տվեցին կատարել վերլուծություն վերոհիշյալ երկու համաձայնագրերը ուժի մեջ մտնելուց հետո իրավիճակի վերաբերյալ: Սույն ծրագրի ընթացքում ուսումնասիրվել է նաև Արևելյան գործընկերության ծրագրի մյուս երկրների հաջող փորձը /Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան/:

Առաջին անգամ անց է կացվել մերժման դեպքերի ուսումնասիրություն և վերլուծություն՝ հիմնվելով մերժում ստացած դիմորդների շրջանում անցկացված հարցումների վրա: Մերժման դեպքերի վերաբերյալ հավաքած տեղեկությունները օգնել են կատարել համապարփակ վերլուծություն մերժման դեպքերի, դրանց պատճառների մասին, որի հիման

վրա պատրաստվել են առաջարկություններ ՀՀ-ում ԵՄ անդամ երկրների դեսպանությունների հյուպատոսական ծառայություններին:

Կատարվել է նաև էլեկտրոնային մամուլի մշտադիտարկում, հաշվի առնելով այն, որ համացանցը տեղեկատվություն ստանալու հիմնական աղբյուրներից մեկն է, ինչպես նաև, որ հասարակությունում շատ ցածր է տեղեկացվածության մակարդակը:

Սույն ծրագրի շահառուներ են հանդիսանում հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, քաղաքացիական հասարակության ակտիվ խմբերը, լրագրողները, պետական մարմինները, ՀՀ-ում եվրոպական երկրների դիվանագիտական ներկայացուցչությունների հյուպատոսական ծառայությունները, վիզաների կենտրոնները, ինչպես նաև ողջ հասարակությունը:

Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են տեղեկատվական միջոցառումներ Վանաձորում և Երևանում, կազմակերպվել է նաև երկօրյա սեմինար Ծաղկաձորում՝ լրատվամիջոցների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Եվրոպական Միության և Հայաստանի Հանրապետության միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագիր[1]՝ դրույթներ և պրակտիկա

ԴՐՈՒՅԹՆԵՐ

Նշենք ԵՄ-ի և ՀՀ-ի միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագրով նախատեսված հիմնական փոփոխությունները.

- ✓ Ավելի հեշտ՝ ավելի քիչ փաստաթղթեր են անհրաժեշտ վիզայի համար դիմելիս (Հոդված 4):
- ✓ Ավելի էժան՝ վիզայի արժեքը 60 եվրոյի փոխարեն կազմում է 35 եվրո, իսկ մի շարք կատեգորիաների համար նաև անվճար (Հոդված 6):
- ✓ Ավելի արագ՝ վիզայի տրամադրման վերաբերյալ որոշումը կայացվում է 10 օրում /միայն առանձին դեպքերում այն կարող է երկարացվել մինչև 30 օր/ (Հոդված 7):

Վիզայի տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագրով Հայաստանի քաղաքացիների հետևյալ կատեգորիաները օգտվում են վիզայի ստացման դյուրացված կարգից.

- մերձավոր ազգականներ՝ ամուսին, երեխաներ (ներառյալ որդեգրվածները), ծնողներ (ներառյալ խնամակալները), տատիկներ, պապիկներ, թոռներ, ովքեր այցելում են անդամ պետությունների տարածքում օրինական կերպով բնակվող Հայաստանի քաղաքացիներին կամ ԵՄ քաղաքացիներին, ովքեր բնակվում են այն անդամ պետության տարածքում, որի քաղաքացիներն են
- պաշտոնական պատվիրակության անդամներ
- դպրոցականներ, ուսանողներ, հետբուհական ուսուցում ստացող անձինք և ուղեկցող ուսուցիչներ
- բուժման նպատակներով ճամփորդող և անհրաժեշտ ուղեկցող անձինք

[1] http://www.mfa.am/u_files/file/EU_AM_VFA_am.pdf

- լրագրողներ և մասնագիտական պարտականությունների կատարման շրջանակներում նրանց ուղեկցող տեխնիկական անձնակազմ
- միջազգային սպորտային միջոցառումների մասնակիցներ և մասնագիտական պարտականությունների կատարման շրջանակներում նրանց ուղեկցող անձինք
- գործարարներ և բիզնես կազմակերպությունների ներկայացուցիչներ, միջազգային ցուցահանդեսներին, խորհրդաժողովներին, գիտաժողովներին, սեմինարներին կամ այլ նմանատիպ միջոցառումներին մասնակցող մասնագետներ
- քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ և անդամ պետություններում գրանցված հայկական համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կողմից հրավիրված անձինք
- գիտական, ակադեմիական, մշակութային և գեղարվեստական աշխատանքներին մասնակցող անձինք՝ ներառյալ համալսարանական և այլ փոխանակման ծրագրերը
- Հայաստանում գրանցված տրանսպորտային միջոցների վարորդներ, ովքեր իրականացնում են միջազգային բեռնափոխադրումների և ուղևորների փոխադրման ծառայություններ
- քույր քաղաքներ և այլ քաղաքային մարմինների կողմից կազմակերպված պաշտոնական փոխանակման ծրագրերի մասնակիցներ
- զինվորական և քաղաքացիական շիրիմներ այցելելու համար

Վիզայի դիմումների հետ կապված ձևակերպումների համար վճարներից ազատվում են քաղաքացիների հետևյալ կատեգորիաները. ա) թոշակառուները, բ) 12 տարեկանից ցածր տարիք ունեցող երեխաները, գ) ազգային ու տարածաշրջանային կառավարությունների և սահմանադրական ու գերագույն դատարանների անդամները, եթե նրանք սույն համաձայնագրով ազատված չեն վիզայի պահանջից, դ) հաշմանդամություն ունեցող անձինք և նրանց ուղեկցող անձինք՝ ըստ անհրաժեշտության, ե) անդամ պետությունների տարածքներում օրինական կերպով բնակվող Հայաստանի քաղաքացիներին կամ ԵՄ քաղաքացիներին, ովքեր բնակվում են այն անդամ պետության տարածքում, որի քաղաքացիներն են,

այցելող մերձավոր ազգականները՝ ամուսինը, երեխաները (ներառյալ որդեգրվածները), ծնողները (ներառյալ խնամակալները), տատիկները, պապիկները, թոռները, զ) պաշտոնական պատվիրակության անդամները՝ ներառյալ պաշտոնական պատվիրակությունների մշտական անդամները, ովքեր Հայաստանին հասցեագրված պաշտոնական հրավերի հիման վրա մասնակցում են հանդիպումներին, խորհրդակցություններին, բանակցություններին կամ փոխանակման ծրագրերին, ինչպես նաև միջկառավարական կազմակերպությունների կողմից անդամ պետությունների տարածքներում կազմակերպվող միջոցառումներին, է) դպրոցականները, ուսանողները, հետբուհական ուսուցում ստացող անձինք և ուղեկցող ուսուցիչները, ովքեր ճամփորդություն են ձեռնարկում ուսման կամ կրթական վերապատրաստման նպատակով, ներառյալ՝ փոխանակման ծրագրերի, ինչպես նաև դպրոցի հետ կապված գործունեության այլ ոլորտների շրջանակներում, ը) լրագրողները և մասնագիտական պարտականությունների կատարման շրջանակներում նրանց ուղեկցող տեխնիկական անձնակազմը, թ) միջազգային սպորտային միջոցառումների մասնակիցները և մասնագիտական պարտականությունների կատարման շրջանակներում նրանց ուղեկցող անձինք, ժ) քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները և անդամ պետություններում գրանցված հայկական համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կողմից հրավիրված անձինք, որոնք ճամփորդություն են ձեռնարկում կրթական վերապատրաստումներին, սեմինարներին, խորհրդաժողովներին՝ ներառյալ փոխանակման ծրագրերի կամ համահայկական և համայնքային աջակցության ծրագրերի շրջանակներում մասնակցելու նպատակով, ժա) գիտական, ակադեմիական, մշակութային և գեղարվեստական աշխատանքներին մասնակցող անձինք՝ ներառյալ համալսարանական և այլ փոխանակման ծրագրերը, ժբ) այն անձինք, ովքեր ներկայացրել են մարդասիրական նկատառումներով, ներառյալ՝ շտապ բժշկական օգնություն ստանալու համար, իրենց ճամփորդության անհրաժեշտությունը հիմնավորող փաստաթղթեր, և նման անձին ուղեկցող անձը, կամ մերձավոր ազգականի հուղարկավորությանը մասնակցելու կամ ծանր հիվանդ մերձավոր ազգականին այցելելու համար:

ԵՄ անդամ պետությունների դիվանագիտական առաքելությունները և հյուպատոսական հիմնարկները մինչև մեկ տարվա [1] վավերականությամբ բազմակի մուտքի վիզաներ են տրամադրում պայմանով, որ նախորդ տարվա ընթացքում նրանք ստացել են նվազագույնը մեկ վիզա և օգտվել դրանից՝ այցելած անդամ պետության մուտքի և գտնվելու վերաբերյալ օրենքներին համապատասխան:

Անդամ պետությունների դիվանագիտական առաքելությունները և հյուպատոսական հիմնարկները առնվազն 2 տարվա և առավելագույնը 5 տարվա վավերականությամբ բազմակի վիզաներ են տրամադրում վերոնշյալ քաղաքացիների կատեգորիաներին՝ պայմանով, որ նախորդ 2 տարվա ընթացքում նրանք օգտվել են մեկ տարվա բազմակի մուտքի վիզաներից՝ այցելած անդամ պետության՝ մուտքի և գտնվելու վերաբերյալ օրենքներին համապատասխան:

Հիմնավորված հրատապ դեպքերում հյուպատոսարանը կարող է դիմողներին թույլ տալ իրենց դիմումները ներկայացնել առանց հարցազրույց անցնելու, կամ հարցազրույցը կազմակերպել անմիջապես:

Սույն համաձայնագրով երկրները կարելի է բաժանել 3 խմբերի.

- Շենգենյան համաձայնագրերի լիիրավ անդամ-երկրներ /Ավստրիա, Բելգիա, Հունգարիա, Գերմանիա, Հունաստան, Իսպանիա, Իտալիա, Լատվիա, Լիտվա, Լյուքսենբուրգ, Մալթա, Նիդերլանդներ, Լեհաստան, Պորտուգալիա, Սլովակիա, Սլովենիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Չեխիա, Շվեդիա, Էստոնիա/, որոնց համար պարտադիր են համաձայնագրի դրույթները: Իսլանդիան, Լիխտեշտեյնը, Նորվեգիան և Շվեյցարիան չնայած հանդիսանում են Շենգենյան համաձայնագրերի լիիրավ անդամներ, սակայն չեն հանդիսանում ԵՄ անդամներ, ինչպես նաև ՀՀ և ԵՄ միջև ստորագրված վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին համա-

[1] Պետք է հիշել, որ վիզայի վրա նշված ամսաթվերը իրավունք չեն տալիս այդ ողջ ընթացքում գտնվել Շենգեն գոտում: Միանգամյա մուտքի արտոնագրերը տեղեկություն են տրամադրում թույլատրվող օրերի վերաբերյալ /օր.՝ 15 օր/: Այլ է խնդիրը բազմակի մուտքի իրավունքով վիզաների դեպքում. թույլատրվում է գտնվել Շենգեն գոտում մինչև 90 օր յուրաքանչյուր 180 օր ժամանակահատվածի ընթացքում: Վիզայի Շենգեն գոտու մնացորդ օրերի մասին կարող եք տեղեկանալ՝ օգտվելով Եվրոպական հանձնաժողովի պաշտոնական «Շենգենյան հաշվիչից»՝ http://ec.europa.eu/dgs/home-affairs/what-we-do/policies/borders-and-visas/border-crossing/schengen_calculator_en.html:

ձայնագրի կողմ: Անհրաժեշտ է, որ Շվեյցարիայի, Իսլանդիայի, Լիխտեյնշտեյնի և Նորվեգիայի ու Հայաստանի իշխանությունները կնքեն կարճաժամկետ վիզաների տրամադրումը դյուրացնելու վերաբերյալ երկկողմ համաձայնագրեր՝ ԵՄ և ՀՀ միջև Համաձայնագրի նմանատիպ պայմաններով (տե՛ս վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագիրը)[1]:

- Երկրներ, որոնց հետ անհրաժեշտ է երկկողմ համաձայնագրեր կնքել /Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն, Իռլանդիա, Դանիա՝ չնայած, որ Դանիան հանդիսանում է ԵՄ անդամ և մտնում է Շենգեն գոտու մեջ/:
- Շենգենյան համաձայնագրերի ոչ լիիրավ անդամ-երկրներ, որոնք կարող են տրամադրել միայն ազգային վիզաներ, սակայն Շենգենյան գոտու համար նախատեսված վիզաները վավերական են իրենց տարածքում /Բուլղարիա, Ռումինիա, Կիպրոս /:

Շատ երկրներում գործում են վիզային կենտրոններ, երբ դեսպանությունը քաղաքացիներից վիզաների դիմում-հայտեր ընդունելու իրավունք է տալիս այլ կազմակերպության: Դրա մասին կա հիշատակում վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագրում, ըստ որի «արտաքին ծառայություն մատուցողը կարող է ծառայության դիմաց վճար գանձել քաղաքացիներից»: Ըստ համաձայնագրի «այս վճարը պետք է համաչափ լինի արտաքին ծառայություն մատուցողի՝ իր գործառույթներն իրականացնելու ընթացքում կատարած ծախսերին և չպետք է գերազանցի 30 եվրոն» (վիզայի տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագրի Հոդված 6, կետ 3): Դիմողներին պետք է հնարավորություն ընձեռնվի նաև իրենց դիմումները անմիջականորեն հանձնելու հյուպատոսարաններին առանց միջնորդ-կազմակերպությունների: Միության համար արտաքին ծառայություն մատուցողն իր գործողություններն իրականացնում է Վիզայի օրենսգրքին համապատասխան և պարտավորվում է լիարժեք կերպով պահպանել Հայաստանի օրենսդրությունը: Հայաստանում նման առաջին կենտրոնը բացվել է Մեծ Բրիտանիայի դեսպանության կողմից, որտեղ բացի վիզայի համար նախատեսված գումարից

[1] http://ec.europa.eu/dgs/home-affairs/what-we-do/policies/borders-and-visas/schengen/index_en.htm

գանձվում է նաև 59 ֆունտ գումար՝ ծառայություններ մատուցելու համար:

Այժմ Հայաստանում գործում է Շենգեն գոտու երկրների վիզաների դիմումներ ընդունող վիզա կենտրոններ, որոնք համագործակցում են ՀՀ-ում Լիտվայի և Հունաստանի դեսպանությունների հետ /Իսպանիայի, Լիտվայի, Լատվիայի, Էստոնիայի, Դանիայի, Հունգարիայի, Հունաստանի վիզաներ/, իսկ 2015թ. հոկտեմբերին բացվել է ևս մեկ վիզա կենտրոն, որը համագործակցում է Իտալիայի դեսպանության հետ /Իտալիայի, Ֆինլանդիայի, Մալթայի վիզաներ/:

Չնայած նրան, որ ԵՄ և ՀՀ միջև վիզայի տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագրով նախատեսվում է վիզայի տրամադրման դյուրացում քաղաքացիների մի շարք կատեգորաների համար, պետք է հիշել, որ սա նաև բարդ բյուրոկրատական գործընթաց է, և, որ վիզա տրամադրել-չտրամադրելու որոշման կայացումը պարունակում է նաև որոշակի սուբյեկտիվ գործոն: Վիզայի տրամադրման այդ սուբյեկտիվ պահին նաև ավելանում է սահմանի վրա սահմանապահի որոշում կայացնելու հարցը՝ թույլատրե՞լ մուտք գործել երկիր, թե ո՞չ, այսինքն, վիզա ունենալու փաստը չի նշանակում սահմանի վրա երկիր մուտք գործելու ավտոմատ թույլտվություն (սակայն պետք է նշել, որ երկիր սահմանի վրա մուտք գործելու արգելք կիրառվում է միայն բացառիկ դեպքերում), քանի որ երկրի սահմանային կետն է հանդիսանում երկիր մուտք գործելու վերջին «անցակետը»:

Տեղեկացնենք, որ Հայաստանում Շենգենյան համագործակցության անդամ-երկրների բոլոր հյուպատոսությունները ս.թ. հունիսի 23-ից միացվել են Վիզաների տեղեկատվական համակարգին (ՎՏՀ, անգլ.՝ VIS): «VIS» համակարգը ստեղծվել է վիզային գործընթացների պարզեցման եւ վիզայի դիմելու գործընթացի անվտանգության բարձրացման համար: Այն իրենից ներկայացնում է գոնե մեկ անգամ վիզայի համար դիմած անձանց կենսաչափական տեղեկությունների միասնական կենտրոնացված բազա: Շենգենյան վիզայի համար դիմողներից կպահանջվի տրամադրել իրենց կենսաչափական տվյալները (մատնահետքեր և թվային լուսանկար): Կենսաչափական տվյալները, ինչպես նաև Շենգենյան վիզայի դիմումի մեջ ներառված տեղեկատվությունը կգրանցվի ՎՏՀ տվյալների կենտրոնական շտեմարանում: Կենսաչափական տեխնոլոգիաների օգնությամբ

վիզայի համար դիմողներն ավելի լավ պաշտպանված կլինեն անձնական տվյալների գողությունից: Տեխնոլոգիաների կիրառումը նաև կկանխարգելի կեղծ ինքնության դրսևորման դեպքերը, որոնք որոշ դեպքերում հանգեցնում են վիզայի կամ երկիր մուտք գործելու մերժման այն անձանց, ովքեր իրականում այցի իրավունք ունեն: Ճամփորդական փաստաթղթերն ավելի պաշտպանված դարձնելու նպատակով կենսաչափական տեխնոլոգիաները լայնորեն կիրառվում են Եվրոպական Միությունում[1]: Այսպիսով, 2015 թվականի հունիսի 23-ից Շենգեն վիզայի համար դիմած Հայաստանի քաղաքացիները պետք է անձամբ ներկայանան, որպեսզի տրամադրեն կենսաչափական տվյալներ (մատնահետքեր և թվային լուսանկար): Սա վերաբերում է կարճաժամկետ Շենգենյան վիզաների դիմումներին (առավելագույնը 90 օր 180 օրվա միջակայքում), 5 տարվա մեջ ամեն հերթական դիմումի պարագայում, մատնահետքերը կպատճենվեն ՎՏՀ-ի նախկին դիմումի գործից: Ցանկացած հաջորդ Շենգենյան վիզայի դիմումի պարագայում 5 տարի ժամանակահատվածի համար մատնահետքերը պետք է նորից հանձնվեն: Մատնահետքերը հանձնելու պարտադիր պահանջից ազատվում են մինչև 12 տարեկան երեխաները, անձինք, ումից ֆիզիկապես անհնար է մատնահետքեր վերցնել, պետությունների ղեկավարները, ազգային կառավարությունների անդամները, նրանց ուղեկցող կանայք/ամուսինները և պաշտոնական պատվիրակության անդամները, երբ նրանք պաշտոնական այցով հրավիրված են ԵՄ անդամ պետությունների կառավարությունների կամ միջազգային կազմակերպությունների կողմից[2]:

---

[1] http://eunewsletter.am/hy/%D5%B4%D5%A1%D5%BF%D5%B6%D5%A1%D5%B0%D5%A5%D5%BF%D6%84%D5%A5%D6%80-%D6%87-%D5%A9%D5%BE%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%AC%D5%B8%D6%82%D5%BD%D5%A1%D5%B6%D5%AF%D5%A1%D6%80%D5%9D-%D5%B7%D5%A5%D5%B6%D5%A3/

[2] Առավել մանրամասն տեղեկությունների համար տես՝ http://ec.europa.eu/vis

Հյուպատոսություններին ուղղվել են հետևյալ հարցերը.

- Խնդրում ենք տրամադրել վիճակագրական տվյալներ վիզաների հետ կապված և լրացնել ստորև ներկայացված աղյուսակը:

Տարի	Դիմումների քանակը	Տրված վիզաների քանակը	Մերժում-ների քանակը	Անվճար վիզաների քանակը	Միան-գամյա վիզան եր	Բազմակի մուտքի իրավունք ով վիզաներ	Բազմակի մուտքի իրա-վունքով վիզաներ (1 տարի և ավելի վավերականու թյամբ)	Բողոքարկ ման դիմումներ ի քանակը	Բողոքարկմ ան արդյունքում փոփոխված որոշումների քանակը
2014									
2015									

- Որո՞նք են վիզայի մերժման հիմնական, առավել տարածված պատճառները:
- Արդյո՞ք պարտադիր կերպով գրավոր տեղեկացնում եք մերժում-ների դեպքում՝ նշելով նաև մերժման հիմնավորումը:
- Արդյո՞ք դիմողը կարող է դիմել վերանայել/բողոքարկել որոշումը մերժում ստանալուց հետո և, եթե այո՛, ապա՝ արդյո՞ք կա դրա մասին համապատասխան տեղեկատվություն դեսպանության պաշտոնական կայքում:
- Արդյո՞ք դուք անձնագրերում կնիք եք դնում մերժումների դեպքում և, եթե այո՛, ապա՝ ո՞րն է դրա իրավական հիմնավորումը:
- Ի՞նչ քայլեր են ձեռնարկվում հյուպատոսական բաժնի կողմից դիմումները հանձնելու ժամանակ մեծ հերթերից խուսափելու համար /հատկապես ամառային և ձմեռային արձակուրդների ընթացքում/:

Ստացված պատասխանները ուսումնասիրվել են և վերլուծվել, դրա հիման վրա ստորև ներկայացնում ենք արդյունքներն ըստ երկրների:

ՊՐԱԿՏԻԿԱ

ՀՀ-ում գործող Շենգեն գոտու անդամ-երկրների հյուպատոսական ծառայություններ

➢ **Գերմանիա**

Գերմանիայի դեսպանության պաշտոնական կայքը թարմացված է և պարունակում է մանրամասն տեղեկություններ վիզայի դիմելու համար անհրաժեշտ ողջ գործընթացի մասին հայերենով և գերմաներենով /հակիրճ ինֆորմացիա կա նաև անգլերենով/, ինչպես նաև տեղեկություններ վիզայի տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագրի վերաբերյալ: Վիզայի համար դիմելիս գործերը հանձնելու համար հարցազրույցի պայմանավորվածություն կարելի է ձեռք բերել միայն առցանց, ինչը շատ հարմար է դիմողների համար, ինչպես նաև նշված են այն երկրները (Բելգիա, Լյուքսենբուրգ, Շվեդիա, Ավստրիա, Նիդերլանդներ), որոնց վիզաների ստացման համար պետք է դիմել Գերմանիայի դեսպանություն: Կայքում նաև տեղադրված են հուշաթերթիկներ, որոնք մատչելի ձևով ներկայացնում են դիմողի քայլերը վիզայի դիմելու համար:

Գերմանիայի հյուպատոսության բաժնի կայքում նշվում է, որ ներկայացվող փաստաթղթերի ցանկը կազմված է Շենգենյան գոտու երկրների՝ Հայաստանում հավատարմագրված դեսպանությունների հետ համաձայնեցմամբ: Սա նշանակում է, որ Հայաստանի նշված բոլոր դեսպանություններում վիզայի ընթացակարգի հետ կապված նույնատիպ փաստաթղթեր պետք է ներկայացնել:

Ի պատասխան մեր գրավոր հարցման Գերմանիայի հյուպատոսարանը ներկայացրել է վիզաների հետ կապված 2014-2015թթ. Վիճակագրական հետևյալ տվյալները. 2014թ. ընթացքում ստացված 17 հազար դիմումներից մերժվել է 4000 /այդ թվում ներառված են նաև չեղարկված դիմումները/, իսկ տված 13 հազար վիզաներից 1800 կազմում են բազմակի մուտքի իրավունքով վիզաները (1 տարի և ավելի վավերականությամբ): 2015թ. հունվար-հուլիս ամիսների ընթացքում ստացված 10200 դիմումներից մերժվել է 2700 /այդ թվում ներառված են նաև չեղարկված դիմումները/, իսկ տված 7500 վիզաներից 1270-ը կազմում է բազմակի մուտքի իրավունքով վիզաները (1 տարի և ավելի վավերականությամբ):

Ստացված պատասխանում որպես մերժումների հիմնական ու ամենատարածված պատճառ նշվում է հայտատուի Հայաստան վերադառնալու ցածր հավանականությունը, միջոցների ոչ բավարար լինելը, այցի ոչ հստակ, վստահելի նպատակը: Ինչ վերաբերում է մերժումներին, ապա այդ դեպքում ըստ Գերմանիայի հյուպատոսի պատասխանի մերժման հետ դիմողին տրվում է գրավոր տեղեկացում՝ մերժման պատճառների հիմնավորմամբ (մինչ այդ դա պարտադիր բնույթ չէր կրում): Դիմողը իրավունք ունի որոշումը բողոքարկել Գերմանիայի համապատասխան դատարանում՝ Բեռլինի վարչական դատարանում մեկ ամսվա ընթացքում, իսկ բողոքարկման հնարավորության և ընթացակարգի մասին կայքում կա մանրամասն ինֆորմացիա:

Մերժումների դեպքում դիմորդների անձնագրերում կնիք չի դրվում, սակայն Վիզա օրենսգրքի 20 հոդվածի պահանջների համաձայն բոլոր քննման ընդունված հայտերի անձնագրերը կնիքվում են, իսկ վիզա տրվելու դեպքում վիզան փակցվում է կնիքի վրայից: Դիմողի անձնագրում կնիքի առկայությունը նշանակում է, որ Գերմանիայի դեսպանությունը քննել է տվյալ անձի գործը: Այդ կնիքն ազդեցություն չունի Գերմանիայի կամ այլ Շենգեն պետության դեսպանությունում հետագա հանձնելիք գործերի որոշման վրա: Վիզայի յուրաքանչյուր գործի քննման ժամանակ հաշվի են առնվում միայն տվյալ պահի հանգամանքները: Սակայն քաղաքացիները շատ հաճախ տեղյակ չեն օրենքի այդ դրույթների մասին, սա ևս մեկ անգամ փաստում է նման նախաձեռնությունների և նախագծերի կարևորության մասին քաղաքացիների իրազեկման բարձրացման, իրենց իրավունքների պաշտպանության հարցերում:

Հերթերից խուսափելու համար հյուպատոսը խորհուրդ է տալիս միայն շատ շուտ, նախօրոք դիմել, սակայն միշտ չէ, որ դիմողը նախօրոք /օրինակ, նախատեսված այցից 1-2 ամիս առաջ/ իմանում է դրա մասին: Դա շատ կարևոր խնդիր է նաև Գերմանիայի դեպքում, քանի որ այդ հյուպատոսությունը ընդունում է նաև մի շարք այլ Շենգեն երկրների վիզայի դիմումներ և հերթագրվել անհրաժեշտ է միայն առցանց համակարգում, հաճախ խնդիրներ են առաջանում դրա հետ կապված /գրանցման հնարավոր ամենամոտ ժամկետ հաճախ մեկ ամիս հետո է միայն/:

Հետաքրքիր է նաև, որ Գերմանիայի հյուպատոսարանի դեպքում պահանջվում է ներկայացնել տեղեկություններ ոչ միայն ԵՄ-ում, այլ նաև Ռուսաստանում ապրող հարազատների մասին՝ պահանջելով դրա հետ միասին ներկայացնել տվյալ հարազատների Ռուսաստանում բնակվելու օրինական հիմքերը /երեխաների, ծնողների, եղբայրների կամ քույրերի արտերկրում (նաև Ռուսաստանում) գտնվելու դեպքում՝ այդ մասին ապացույց, օր.՝ տեղեկանք գրանցման վերաբերյալ կամ կացության իրավունքի պատճենը[1]/:

Բացի դրանից կա ևս մեկ հավելյալ փաստաթուղթ, որը պետք է ներկայացնել ստորագրված՝ հայտարարություն կեղծ տվյալների վերաբերյալ (տե՛ս դիմումի ձևը [2]), չնայաց դիմում-հարցաթերթիկի վերջին էջում արդեն իսկ կա առանձին բաժին կեղծ տվյալների մասին:

Այնուամենայնիվ, պետք է հատուկ նշել Գերմանիայի հյուպատոսարանի համագործակցելու պատրաստակամությունն ու մեր հարցումներին արագ արձագանքելը:

➢ **Լեհաստան**

Լեհաստանի դեսպանության հյուպատոսական բաժինը ևս շատ պատրաստակամ է համագործակցության և բարձր մակարդակի վրա է կազմակերպել ինչպես քաղաքացիների ընդունելության հետ կապված ամենօրյա աշխատանքները, այնպես էլ հնարավորինս մանրամասն, թարմ և ամբողջական տեղեկատվություն է տեղադրված պաշտոնական կայքում: Կայքում նշված են այն երկրները, որոնց վիզաները տրվում են լեհական հյուպատոսությունում, բացի Լեհաստանից. դրանք են՝ Սլովենիան, Սլովակիան, իսկ 2014թ. մարտից՝ նաև Շվեյցարիան: Յուրաքանչյուր երկրի համար երեք լեզուներով (լեհերեն, հայերեն, անգլերեն) տրվում է մանրամասն տեղեկատվություն վիզա ստանալու համար դիմելիս հերթագրման կարգի, անհրաժեշտ փաստաթղթերի, մերժման դեպքում բողոքարկման հնարավորության և այլնի մասին: Կայքում կարող ենք գտնել նաև տեղեկատվություն վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագրի վերաբերյալ, դրանով նախատես-

[1] http://www.eriwan.diplo.de/contentblob/2173646/Daten/5670754/Merkblatt_Geschaeft_arm.pdf

[2] http://www.eriwan.diplo.de/contentblob/3873244/Daten/2963782/Erklaerung_Falschangaben.pdf

ված հիմնական նորամուծությունների մասին, ինչպես նաև կենսաչափական տվյալների հավաքագրման մասին:

ՀՀ-ում Լեհաստանի դիվանագիտական ներկայացուցչության հյուպատոսական բաժինը մանրամասն պատասխանել է մեր հարցմանը: Համաձայն հյուպատոսական բաժնի տրամադրած տվյալների Լեհաստանի դեսպանությունում 2014թ. ընթացքում տրվել է 4143 վիզա, իսկ 2015թ. հունվար-հունիս ամիսներին՝ 2044 վիզա:

Լեհաստանի դեպքում որպես մերժման ամենահաճախ հանդիպող պատճառ նշվում է ուղևորության նպատակը պատշաճ ձևով չհիմնավորելը /Վիզա օրենսգրքի (Visa Code) 32.1 հոդվածի բ) կետ/: Համաձայն լեհական կողմի պատասխանի բացասական տենդենցը այս տարի շարունակում է աճել. անցած տարվա ընթացքում դիմորդներն ավելի հաճախ են սկսել ներկայացնել կեղծ փաստաթղթեր: Դիմորդները շատ ավելի հաճախ գիտակցաբար ներկայացնում են սխալ տեղեկություններ կամ միտումնավոր փորձում են թաքցնել ճշմարտությունը կապված նրանց Շենգեն «պատմության» հետ, Շենգեն գոտում բնակվող հարազատների մասին տեղեկությունները և այլն:

Լեհաստանի դեսպանությունը Վիզա օրենսգրքի 32.2 հոդվածի համաձայն մերժման յուրաքանչյուր դեպքում գրավոր տեղեկացնում է բացասական որոշման մասին, ներկայացնելով մերժման պատճառը, ինչպես նաև տեղեկացնելով բողոքարկման հնարավորության մասին /մերժման տեղեկացման մեջ տեղեկատվություն է տրամադրվում նաև բողոքարկման գործընթացի և վերջնաժամկետի մասին/: Վիզայի մերժման դեպքում բողոքարկման հնարավորության վերաբերյալ տեղեկատվություն է տրամադրված նաև հյուպատոսական ծառայության պաշտոնական կայքում:

Մերժման դեպքում չկա անձնագրում կնիք խփելու պրակտիկա, սակայն համաձայն Վիզա օրենսգրքի հոդված 20-ի բոլոր անձնագրերը կնքվում են՝ հաստատելու դիմումի ընդունման փաստը:

Հետաքրքիր քայլ էր Լեհաստանի կողմից 2014թ. հունվարից ՀՀ քաղաքացիներին 6 ամիս ժամկետով առանց հատուկ թույլտվության Լեհաստանում աշխատելու իրավունքի մասին որոշումը, ինչը նշանակում է, որ աստիճանաբար դրական փոփոխություններ են տեղի

ունենում ՀՀ քաղաքացիների հանդեպ եվրոպացիների վերաբերմունքի մեջ:

Հետաքրքիր էր նաև տեղեկանալ կայքից, որ Լեհաստանի Հանրապետության դեսպանը քաղաքացիների դիտողություններն ու բողոքները լսելու նպատակով կազմակերպում է ընդունելություն յուրաքանչյուր չորեքշաբթի ժ. 10-ից 12-ը և դրա համար անհրաժեշտ է նախապես հերթագրվել (+374) 10 54 24 91 հեռախոսահամարով կամ erewan.amb.sekretariat@msz.gov.pl էլ. փոստով: Դեսպանի հետ հանդիպումը ևս մեկ հնարավորություն է տալիս քաղաքացիներին բարձրաձայնել իրենց խնդիրների մասին:

Լեհաստանի դեսպանության կայքի վիզաների բաժնում կան նաև մանրամասն տեղեկություններ Լեհաստանում անօրինական բնակության հետևանքների, պայմանների, վերադարձնելու և այլ հարցերի վերաբերյալ:

Պարտադիր էլեկտրոնային հերթագրման համակարգի ներդրումը դիմողների հերթերի և կուտակումների գոյացման հետ կապված խնդիրների լուծմանն ուղղված առաջին քայլերից էր: Ավելին, Լեհաստանի հյուպատոսության կողմից առաջարկվեց հետաքրքիր լուծում. յուրաքանչյուր շաբաթվա ուրբաթ օրը առավոտյան բացվում է հաջորդ շաբաթվա համար հերթագրման հնարավորությունը, ինչը գրեթե բացառում է մեծ հերթերի առաջացումը, ինչպես նաև այնպիսի դեպքերը, երբ գրանցվելու համար հնարավոր մոտակա օրը միայն 1-2 ամիս հետո է, ինչպես որոշ դեսպանությունների հյուպատոսական ծառայությունների մոտ: Այդ խնդիրը հատկապես ակնառու է դառնում ամառային և ձմեռային արձակուրդների ընթացքում:

Լեհաստանի հյուպատոսարանի պարագայում անհրաժեշտ է հատկապես ընդգծել հենց թափանցիկ աշխատելաոճն ու համագործակցելու պատրաստակամությունը:

- **Ֆրանսիա**

Ֆրանսիայի դեսպանության հյուպատոսական բաժնի պաշտոնական կայքը թարմացված է, կա հիշատակում նոր կանոնների վերաբերյալ և պարունակում է վիզայի համար դիմելիս քաղաքացիներին անհրաժեշտ մանրամասն տեղեկություններ հայերենով և ֆրանսերենով: Վիզայի դիմումը ներկայացնելու համար գրանցումը կատարվում է բացառապես

առցանց: Բացի ֆրանսիական վիզաներից Ֆրանսիայի դեսպանության հյուպատոսական բաժինը պատասխանատու է նաև Պորտուգալիայի և Իսլանդիայի վիզաների համար:

Միայն Ֆրանսիայի դեսպանության կայքում են ներկայացված տեղեկություններ Հայաստանում ԵՄ մյուս անդամ-երկրների դեսպանությունների վերաբերյալ, ինչը գովելի է և հարմար:

Ֆրանսիայի դեսպանության կայքի վիզաների բաժնում ներկայացված է նաև փաստաթղթերի ամբողջական ցանկը, սակայն չկա հիշատակում կենսաչափական տվյալների հավաքագրման, ինչպես նաև բողոքարկման հնարավորության և կարգի մասին որևէ տեղեկություն:

Հետաքրքիր է նաև, որ միայն Ֆրանսիայի հյուպատոսարանի դեպքում պահանջվում է ներկայացնել լրացուցիչ փաստաթուղթ, որը հավելյալ տեղեկություններ է պարունակում հայտատուի ընտանիքի /հայր, մայր, ամուսին, կին, երեխաներ/ մասին[1]:

Բացի այդ ըստ դեսպանության կայքի միայն ֆրանսիական հյուպատոսարանի կողմից պահանջվում է ներկայացնել ևս մեկ հավելյալ փաստաթուղթ, որը իրենից ներկայացնում է «վերադառնալու պարտավորագիր»: Դրանում, մասնավորապես նշվում է. «Պարտավորվում եմ Հայաստան վերադառնալուց հետո իմ անձնագրով, սահմանային ոստիկանության կողմից կնքված արտոնագրի պատճենով, ինչպես նաև սույն ծանուցագրով ներկայանալ Երևան, Գրիգոր Լուսավորչի 8 հասցեում գտնվող Ֆրանսիայի դեսպանություն: Իրազեկված եմ, որ սույն պարտավորությունը չկատարելու դեպքում իմ նկատմամբ հետապնդում կիրականացվի, իմ, ինչպես նաև իմ հնարավոր երաշխավորների հաջորդ վիզաների դիմումները կմերժվեն[2]»:

Ֆրանսիայի հյուպատոսարանը մեր նամակ-հարցմանը պատասխանում նշել է, որ բարձրացրած գրեթե բոլոր հարցերի վերաբերյալ տեղեկությունները կարող ենք գտնել իրենց կայքում, հրաժարվելով ներկայացնել վիճակագրական տվյալներ տրամադրված վիզաների, մերժումների մասին: Բացի վիզաների մասին վիճակագրական տվյալներից կայքում չկան

---

1 file:///D:/ALL%20BEFORE%202014/My%20Documents/Downloads/Formulaire_schengen_code_communautaire-2%20(3).pdf

2 file:///D:/ALL%20BEFORE%202014/My%20Documents/Downloads/convocation%20(2).pdf

նաև մի շարք այլ կարևոր հարցերի պատասխաններ, մասնավորապես, մերժման պատճառների, բողոքարկման հնարավորության և ընթացակարգերի մասով: Պատասխանում միայն նշվել է, որ հյուպատոսությունը չի տրամադրում վիճակագրական տվյալներ, իսկ վիզաների տրամադրման/մերժման և այդ գործընթացի հետ կապված բոլոր հարցերում առաջնորդվում է Վիզա օրենսգրքի, Ֆրանսիայի միգրացիայի և ապաստանի մասին օրենքի դրույթներով:

➢ **Իտալիա**

Պետք է նշել, որ մինչ 2015թ. Իտալիայի դեսպանության հյուպատոսական բաժնի պաշտոնական կայքի վիզաների վերաբերյալ ինֆորմացիան շատ ընդհանուր էր, իսկ այժմ կայքում տեղադրված է հայտարարություն, որով տեղեկացվում է, որ հյուպատոսությունը ս.թ. հոկտեմբերից սկսել է համագործակցել վիզա կենտրոնի հետ՝ առաջարկելով Իտալիայի, Մալթայի, Ֆինլանդիայի վիզաների համար դիմել այդ կենտրոն: Կայքում տեղեկացվում է նաև, որ դեսպանությունը վիզաների փաստաթղթերի ընդունման համար ժամադրություն չի տրամադրում, այսինքն, վիզայի համար դիմողը հնարավորություն չունի դեսպանություն դիմելու և պետք է դիմի միայն վիզա կենտրոն՝ Վիզա օրենսգրքի և ՀՀ-ԵՄ վիզաների դյուրացման մասին համաձայնագրի պայմաններին հակառակ:

Այսպիսով, Իտալիայի դեսպանության կայքը բացի վիզա կենտրոն դիմելու մասին հայտարարությունից վիզայի մասին այլ տեսակի որևէ տեղեկատվություն չի պարունակում և պոտենցիալ դիմորդին միանգամից ուղորդում է վիզա կենտրոնի կայք:

Իտալիայի հյուպատոսարանը ևս պատասխանել է մեր հարցմանը, սակայն հրաժարվել է ներկայացնել վիզաների վերաբերյալ վիճակագրական տվյալներ՝ հղում անելով գաղտնիության վրա: Մերժումների որպես ամենատարածված պատճառ նշվում է փաստաթղթերի ոչ լիարժեքությունը, ֆինանսական միջոցների ոչ բավարար լինելը և միգրացիոն ռիսկերը: Մերժումների դեպքում պարտադիր կերպով գրավոր տեղեկացնում են մերժման մասին: Մերժման դեպքում որոշման վերանայման հնարավություն չկա, սակայն դիմողը իրավունք ունի նորից դիմելու կամ բողոքարկել մերժումը 60 օրյա ժամկետում Լացիոյի ադմինիստրատիվ ռեգիոնում, բայց բողոքարկման մասին կայքում չկա որևէ նշում: Իտա-

լիայի դեսպանությունում մերժման դեպքում այլևս մերժման վերաբերյալ անձնագրում կնիք չեն դնում /մինչ այդ նման դեպքեր եղել են/ Հայաստանում ՎՏՀ համակարգի լիարժեք իրականացումից հետո /23 հունիս 2015թ./: Հերթերից խուսափելու նպատակով դեսպանությունը 2015թ. հոկտեմբերից սկսել է համագործակցել ծառայություն մատուցող արտաքին կազմակերպության՝ վիզա կենտրոնի հետ:

➢ **Լիտվա**

ՀՀ-ում Լիտվայի դեսպանության հյուպատոսական բաժինը պարունակում է մանրամասն տեղեկություններ, այդ թվում նաև հայերենով: Վիզայի դիմելու համար հերթագրումը կատարվում է միայն առցանց: Բացի լիտովական վիզաներից, այստեղ են տրամադրվում նաև հետևյալ երկրների վիզաները՝ Լատվիա, Էստոնիա, Դանիա, Իսպանիա և Հունգարիա: Ինչպես տեսանք՝ Լիտվայի հյուպատոսությունը ընդունում է նաև մի շարք այլ եվրոպական երկրների վիզաների դիմումներ և հերթերից խուսափելու նպատակով սկսել է համագործակցել համապատասխան վիզա կենտրոնի հետ, նպատակ ունենալով ավելի մեծ հնարավություն տալ պոտենցիալ դիմորդներին:

Սակայն պետք է նշել, որ ՀՀ-ում Լիտվայի դեսպանության հյուպատոսական բաժնի կայքում բացակայում են բողոքարկման մասին և կենսաչափական տվյալների հավաքագրման մասին տեղեկությունները: Լիտովական հյուպատոսությունը չի տրամադրել վիզաների վերաբերյալ վիճակագրական տվյալներ, ավելին՝ որևէ կերպ չի արձագանքել մեր նամակ-հարցմանը և մենք ստիպված եղել սահմանափակվել միայն կայքում եղած տեղեկատվությամբ:

➢ **Հունաստան**

Պետք է արձանագրել, որ դեսպանության կայքի վիզաների բաժինը ևս համալրվել է տեղեկություններով: Այժմ կարելի է գտնել մանրամասն տեղեկություն հայերենով և անգլերենով, հերթագրումը կատարվում է միայն առցանց, կայքում կան տեղեկություններ վիզաների, դիմելու համար անհրաժեշտ փաստաթղթերի մասին և այլն:

Հյուպատոսարանը չի տրամադրել վիզաների վիճակագրական տվյալներ՝ նշելով, որ 2014թ. վիճակագրական տվյալները կան ԵՄ-ի պաշտոնական կայքում, իսկ 2015թ. տվյալները դեռ պատրաստ չեն: Մերժումները հիմնականում կապված են պահանջվող փաստաթղթերից

մեկի բացակայության դեպքում: Մեր հարցմանն ի պատասխան տեղեկացվում է, որ մերժումների դեպքում տրվում է կնքված և ստորագրված նամակ, իսկ անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելու դեպքում կարելի է նաև դիմել բողոքարկման /չնայած դրա մասին կայքում չկա հիշատակում/: Հյուպատոսարանը դիմողի ճամփորդական փաստաթղթում կնիք դնում է համաձայն Վիզա օրենսգրքի 20 հոդվածի, եթե դիմումը ընդունելի է և քննարկման ենթակա: Հաշվի առնելով տարվա ընթացքում հնարավոր հերթերի առաջացումը՝ հյուպատոսությունը սկսել է համագործակցել համապատասխան վիզա կենտրոնի հետ, բայց պահպանել է իրենց ուղիղ դիմելու հնարավորությունը, ինչը դրական է:

➢ **Չեխիա**

ՀՀ-ում Չեխիայի դեսպանությունը, առաջին անգամ է ընդգրկվել մոնիտորինգում, քանի որ չնայած դեսպանատունը գործում է 2012 թվականից, սակայն հյուպատոսական բաժինը սկսել է գործել 2015թ. մայիսի 4-ից[1], իսկ մինչ այդ Չեխիայի վիզաների համար պետք էր դիմել ՀՀ-ում Լեհաստանի դեսպանություն: Հայաստանում եվրոպական դեսպանությունների բացումը կարևոր առաջընթաց է նաև ՀՀ քաղաքացիների համար վիզայի դիմելու առումով, քանի որ միայն մի քանի տարի առաջ հաճախ դիմորդները ստիպված էին լինում վիզայի համար մեկնել, օրինակ՝ Թբիլիսի կամ Մոսկվա, կամ էլ՝ օգտվել վիզային փաստաթղթերի տեղափոխմամբ զբաղվող մասնավոր ընկերությունների ծառայությունից, ինչը հավելյալ գումար և ժամանակ էր պահանջում:

Չեխիայի դեսպանության կայքը վիզայի վերաբերյալ մանրամասն տեղեկություններ պարունակում հայերենով ու չեխերենով: Դիմողի համար հարցազրույցի նշանակումը կատարվում է միայն առցանց, կա նաև հարցազրույցի նախօրոք չեղարկման հնարավորություն: Կայքը պարունակում է հուշաթերթիկներ, որը ըստ այցելության նպատակի ու տեսակի մանրամասն բացատրում է դիմողի քայլերը, նշում անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը և այլն:

Ի պատասխան մեր հարցմանը Չեխիայի հյուպատոսական բաժնից առաջարկվել է այցելել ԵՄ-ի և ՀՀ-ում Չեխայի դեսպանության պաշտո-

[1] http://www.iravunk.com/index.php?option=com_content&view=article&id=26491:2015-05-04-13-55-28&catid=41:lurer&Itemid=57

նական կայքեր՝ նշելով, որ հարցերի պատասխանը արդեն կա կայքում, սակայն այնտեղ չկան վիզաների վերաբերյալ վիճակագրական տվյալներ:

Մերժման դեպքում գրավոր տեղեկացում է տրամադրվում և ներկայացվում է պատճառը: Եթե մերժման պատճառը դիտարկելուց հետո անգամ դիմորդը դարձյալ համաձայն չի դեսպանության որոշման հետ, ապա կարող է բողոքարկել մերժումը: Կայքում նաև մանրամասն ներկայացվում է բողոքարկման կարգը:

Շենգենյան գոտու ոչ լիիրավ անդամ-երկրներ

Սույն ծրագրի շրջանակներում մոնիտորինգում առաջին անգամ ընդգրկվել են նաև ՀՀ-ում Ռումինիայի և Բուլղարիայի հյուպատոսական բաժինները: Վերոհիշյալ երկրները չեն հանդիսանում Շենգեն գոտու մաս, այլ կարող են տրամադրել միայն ազգային վիզաներ, սակայն Շենգենյան բազմակի մուտքի վիզաները վավերական են իրենց տարածքում: Այդ իսկ պատճառով մի փոքր տարբերվում են նրանց ուղղված հարցերը: Ռումինիայի և Բուլղարիայի հյուպատոսական բաժինների ընգրկումը մեր մոնիտորինգում թույլ տվեց ունենալ ավելի ամբողջական պատկեր և հիմնավոր վերլուծություն:

Հարցերը հետևյալն են.

- Արդյո՞ք ունեք վիզայի համար պահանջվող փաստաթղթերի միասնական ցանկ, ինչպես Հայաստանում ԵՄ-ի անդամ-երկրների հյուպատոսարանները:
- Արդյո՞ք վիզայի տրամադրման կանոնների (առցանց հերթագրում, դիմում-հարցաթերթիկ և այլն) վերաբերյալ կան տեղեկություններ դեսպանության պաշտոնական կայքում և, եթե այո՛, ապա՝ ի՞նչ լեզվով/լեզուներով:
- Ինչպիսի՞ն է երկարաժամկետ և բազմակի մուտքի վիզաների տրամադրման գործընթացը:
- Ինչպիսի՞ն են վիզայի դիմումների և մերժումների վիճակագրական տվյալները 2014 թվականի և 2015թ. հունվար-հուլիս ամիսների համար:
- Որո՞նք են վիզայի մերժման հիմնական, առավել տարածված պատճառները:

- **Բուլղարիա**

ՀՀ-ում Բուլղարիայի դեսպանության պաշտոնական կայքը պարունակում է հղում դեպի Բուլղարիայի ԱԳՆ-ի կայքի վիզաների բաժին http://www.mfa.bg/en/pages/109/index.html, որտեղ ներկայացված են վիզայի հետ կապված ամբողջական տեղեկություններ անգլերենով և բուլղարերենով, մասնակի՝ նաև ռուսերենով: 2012թ. հունվարից որոշում է կայացվել, որի համաձայն վավեր բազմակի մուտքի իրավունքով բոլոր Շենգեն վիզա ունեցող անձինք կարող են մուտք գործել Բուլղարիա առանց բուլղարական վիզայի: Վիզայի համար պահանջվող փաստաթղթերի ցանկը գրեթե համընկնում է Շենգեն զոտու վիզայի համար միասնական ցանկի հետ:

2015թ. սկզբներից ՀՀ քաղաքացիների համար վիզաների տրամադրման դյուրացման քայլ արեց նաև Բուլղարիան: Այն քաղաքացիները, ովքեր առաջին անգամ են պատրաստվում Բուլղարիա գնալ, կարող են ստանալ մեկ տարի ժամկետով կարճաժամկետ երկակի կամ բազմակի մուտքի վիզա: Անչափահասներին, որոնք ցանկանում են հանգստանալ երիտասարդների համար կազմակերպվող ճամբարներում, կտրամադրվեն 5 տարի ժամկետով կարճաժամկետ բազմակի մուտքի վիզաներ: Իսկ 3 տարի ժամկետով կարճաժամկետ երկակի կամ բազմակի մուտքի վիզաներ կտրամադրվեն այն զբոսաշրջիկներին, որոնք նախկինում արդեն ունեցել են նման վիզաներ: Այս պայմաններից կարող են օգտվել նաև անշարժ գույքի սեփականատերերը: Վիզային ռեժիմի այս պարզեցումները առաջարկվում է Հայաստանի, Ռուսաստանի, Վրաստանի, Ուկրաինայի, Բելառուսի եւ Ղազախստանի քաղաքացիների համար[1]:

Բուլղարական հյուպատոսարանում մերժումների քանակը ավանդաբար եղել է շատ ցածր, իսկ մերժման ամենատարածված պատճառը հանդիսանում է այցելության նպատակի ու ներկայացված փաստաթղթերի միջև անհամապատասխանությունը:

- **Ռումինիա**

ՀՀ-ում Ռումինիայի դեսպանության կայքը պարունակում է հղում դեպի Ռումինիայի ԱԳՆ-ի կողմից ներկայացված կայք http://erevan.

[1] http://news.am/arm/news/251631.html

mae.ro/en, որտեղ ներկայացված են վիզայի հետ կապված ամբողջական տեղեկություններ անգլերենով և ռումիներենով:

ՀՀ-ում Ռումինիայի հյուպատոսական ծառայությունը պատասխանել է մեր հարցմանը, ըստ որի 2014թ. ընթացքում Ռումինիայի հյուպատոսական բաժնի կողմից տրվել է մոտ 700 վիզա, որից մոտ 90%-ը եզակի մուտքով: Վիզաների մոտ 85%-ը տրվել են անվճար, իսկ մերժումները կազմել են 1%-ից քիչ: Բողոքարկման դեպքեր չեն գրանցվել: Գրեթե նույն տվյալներ են գրանցվել նաև 2015թ. ընթացքում տրամադրված վիզաների համար:

Վիզայի համար անհրաժեշտ փաստաթղթերը համապատասխանում են ԵՄ Շենգեն պետությունների միասնական ցանկին: Մերժումների ամենատարածված պատճառը պահանջվող փաստաթղթերից մեկի բացակայությունն է, իսկ մերժումների քանակը ռումինական հյուպատոսական բաժնում ավանդաբար շատ ցածր է:

➢ **Վիզա կենտրոն**

Եթե մի քանի տարի առաջ քաղաքացիները դեռ ծանոթ չէին վիզաների ոլորտում պաշտոնապես աջակցություն տրամադրող արտաքին ծառայություն մատուցող կազմակերպությունների, ապա այժմ Հայաստանում արդեն իսկ գործում են մի քանի վիզային կենտրոններ:

Հայաստանում վիզաների դիմումների գործընթացը դյուրացնելու նպատակով իսպանական վիզաների աջակցություն վիզա կենտրոն սկսեց գործել դեռ 2014թ. հունիսից, երբ ՀՀ-ում Իսպանիայի դեսպանատունը (նստավայր՝ Մոսկվա) որոշում կայացրեց մինչև 90 օր վավերականություն ունեցող վիզաների դիմումների ընդունման համար համագործակցել ծառայություն մատուցող VFS Global ընկերության հետ, որը տարբեր երկրների դիվանագիտական ներկայացուցչություններին աջակցող այդ ոլորտում ծառայություններ մատուցող խոշորագույն ընկերություններից մեկն է: 2015թ. հունվարի 15-ից ՀՀ-ում Լիտվայի դեսպանությունը ևս վիզաների դիմումների ընդունման հարցում սկսեց համագործակցել VFS Global ընկերության հետ[1], որտեղ ընդունվում էին դիմումներ դեպի Էստոնիա, Դանիա, Հունգարիա, Լատվիա, Լիտվա, Իսպանիա Շենգենյան մուտքի արտոնագրեր ստանալու համար: Իսկ

[1] http://www.mediamax.am/am/news/foreignpolicy/12829/

արդեն 2015թ. մայիսի 4-ին Երևանում բացվեց հունական վիզաների կենտրոն[1]: Ներկայումս այս կենտրոնները գործում են որպես մեկ վիզա կենտրոն՝ «Միավորված վիզաների դիմումների կենտրոն», որը գտնվում է Նալբանդյան 48/1 հասցեում և ընդունում է 7 Շենգեն երկրների վիզաների դիմումներ:

Հաշվի առնելով դիմումների ընդունման հարցում վիզա կենտրոնի կարևորությունը՝ որոշում կայացվեց մոնիտորինգում ընդգրկել նաև վերոհիշյալ կենտրոնը, ուսումնասիրել գործունեությունը և կայքը: Վիզա կենտրոնին ուղղված հարցերը կազմվել են՝ նաև հաշվի առնելով ծրագրի ընթացքում մամուլում և վիզայի համար դիմած սովորական քաղաքացիների կողմից բարձրացված հարցերը:

Հարցերը հետևյալն են.

- *Ո՞ր երկրներին եք սպասարկում*
- *Ինչքա՞ն է կազմում ծառայությունների վճարը*
- *Խնդրում ենք նկարագրել դիմելու, հերթագրվելու գործընթացը*
- *Արդյո՞ք կա Վիզաների կենտրոնի ծառայություններից օգտված քաղաքացիների վիճակագրությունը գործունեության սկզբից մինչև 2015թ. հուլիս /հնարավորության դեպքում, խնդրում ենք վիճակագրական տվյալները ներկայացնել նաև ըստ երկրների/:*
- *Ինչքա՞ն դիմորդների է անվճար սպասարկել Կենտրոնը*
- *Հաշվի առնելով ամառային ու ձմեռային արձակուրդների պատճառով առաջացած մեծ հերթերը՝ ի՞նչ քայլեր են ձեռնարկվում այդ խնդրի լուծման ուղղությամբ:*

Սակայն Վիզա կենտրոնը որևէ կերպ չի արձագանքել մեր նամակ-հարցմանը (այնպիսի տպավորություն է, որ դրանք գործում են ՀՀ օրենսդրությունից դուրս) և մենք ստիպված կատարել ենք մեր ուսումնասիրությունը՝ հիմնվելով միայն կայքում եղած տեղեկատվության վրա: Ինչ վերաբերում է կայքին, պետք է նշել, որ այն պարունակում է մանրամասն տեղեկություններ վիզաների տեսակների, անհրաժեշտ փաստաթղթերի, վճարների, մատուցած հավելյալ ծառայությունների /վիզայի դիմումի լրացում, լուսանկարում, անձնագրի առաքում և այլն/ մասին, կա

[1] http://www.banks.am/am/news/newsfeed/10782/

առցանց գրանցման և դիմումին առցանց հետևելու հնարավորություն: Վիզայի սակագնից բացի գանձվում է նաև ծառայության վճար 20-24 եվրոյին համարժեք դրամի չափով (ներառյալ ԱԱՀ)՝ կախված երկրից: Վիզա կենտրոնի աշխատանքի հետ կապված նկատառում, բողոք ունենալու դեպքում կա հնարավորություն բողոքը հղել feedback.ltar@vfshelpline.com և feedback.grarm@vfshelpline.com էլեկտրոնային փոստի հասցեին:

Սակայն վիզաների կենտրոնի գործունեության հենց առաջին ամիսներին ի հայտ եկան բազմաթիվ դժվարություններ՝ կապված քաղաքացիների սպասարկման որակի, արձակուրդների ընթացքում գոյացած հսկայական հերթերի հետ, եղավ նաև դիմորդի փաստաթղթերի կորստի դեպք և այլն: Այդ հարցերին բազմիցս անդրադարձել են նաև էլեկտրոնային մամուլում[1], վիզա կենտրոնի աշխատանքի հետ կապված թեժ քննարկումներ են եղել նաև սոցիալական ցանցերում, մեր կազմակերպությունը ևս ստացել է մի շարք բողոքներ: Բազմաթիվ քաղաքացիների դիմումների հիման վրա վիզա կենտրոնի հարցը նույնիսկ հայտնվել է ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (ՏՄՊՊՀ) վարույթում [2]:

Տեղեկացնենք նաև, որ 2015թ. հոկտեմբերից ՀՀ-ում Իտալիայի դեսպանությունը ևս սկսել է համագործակցել վիզա կենտրոնի՝ «TLS CONTACT» կազակերպության հետ, որը գտնվում է Վարդանանց 4 հասցեում, սակայն քանի որ այս վիզա կենտրոնը իր գործունեությունը սկսել է մեր մոնիտորինգի միայն վերջին փուլում, այդ իսկ պատճառով չենք ընդգրկել վերոհիշյալ կենտրոնը: Տեղեկացնենք միայն, որ այս կենտրոնի կայքը ևս բավականին հագեցած է, կա մանրամասն տեղեկություններ վիզաների տեսակների, անհրաժեշտ փաստաթղթերի մասին, առցանց գրանցում, ծառայության համար վճարը կազմում է 10000 դրամ: Այս վիզաների կենտրոնը բացի Իտալիայից, ընդունում է նաև Մալթայի և Ֆինլանդիայի վիզաների դիմումներ: Բայց այս դեպքում Իտալիայի հյուպատոսությունը տեղեկացնում է, որ այլև չի ընդունում վիզաների դիմումներ, ինչը սակայն չի համապատասխանում ՀՀ-ԵՄ վիզայի տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագրի Հոդված 6,

[1] http://www.tert.am/am/news/2015/07/08/visa/1728056 ; http://www.1in.am/1665462.html

[2] http://civilnet.am/2015/08/14/visa-application-center-investigation/#.Vi4qfdIrJkg

կետ 3-ին, որտեղ նշվում է, որ դիմողներին պետք է հնարավորություն ընձեռնվի նաև իրենց դիմումները անմիջականորեն հանձնելու հյուպատոսարաններին առանց միջնորդ-կազմակերպությունների:

Ամփոփելով, պետք է նշել, որ չնայած նրան, որ որոշ դեսպանություններ բավականին լավ են կազմակերպել վիզայի ստացման համար դիմող քաղաքացիների ընդունելության հարցը, սակայն հատկապես ամառային հանգստի շրջանում այն դեսպանություններում, որոնք բացի իրենց երկրի վիզաներից տրամադրում են նաև ԵՄ այլ երկրների վիզաներ, գոյանում են հերթեր, դժվարություններ են առաջանում նաև առցանց գրանցվելու հետ կապված, նման խնդրի բախվեցին նաև վիզա կենտրոնները: Հատկապես մեր հարցումներից հետո այս խնդիրների հաղթահարման ուղղությամբ հյուպատոսարանները որոշակի քայլեր են ձեռնարկել, սակայն հուսով ենք, որ հետագայում ևս, ելնելով անհրաժեշտությունից, կմեծացնեն իրենց թողունակությունը՝ հաշվի առնելով նաև սեզոնային գործոնը, քանի որ փորձը և մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ որոշ դեպքերում հերթեր են գոյանում և առանձին դեպքերում մարդիկ չեն հասցնում ժամանակին վիզա ստանալ: Այդ առումով շատ կարևորվում է դեսպանությունների տեխնիկական հագեցվածության, մարդկային ռեսուրսների ավելացման, հերթերի կազմակերպման, նստատեղերի առկայության և այլ հարցերը:

Ըստ հյուպատոսարանների պատասխանների երկարաժամկետ և բազմակի վիզաների տրամադրման գործընթացը գրեթե նույնն է, ինչ միանգամյա վիզաների դեպքում, միայն այս դեպքում անհրաժեշտ է հիմնավորել հաճախակի այցելությունների նպատակը: Սակայն մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ դեսպանությունները այնքան էլ հակված չեն երկարաժամկետ վիզաներ տրամադրել:

Համեմատելով ՀՀ-ում ԵՄ դեսպանությունների հյուպատոսական բաժինների պաշտոնական կայքերում տեղադրված տեղեկությունները, դրանց աշխատանքն ու վիզայի տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագրի դրույթները, պարզ է դառնում, որ միշտ չէ, որ հյուպատոսությունները ամբողջովին հետևում են համաձայնագրին: Տարբեր հյուպատոսություններ տարբեր կերպ են հետևում համաձայնագրի դրույթներին, տարբեր կերպ է կազմակերպվում նաև նրանց ամենօրյա աշխատանքը:

- **Մերժում ստացած դիմորդների հարցումներ**

ՀՀ-ում որոշ դեսպանությունների հյուպատոսական բաժիններ, անտեսելով կամ այդքան էլ ուշադրություն չդարձնելով վիզայի տրամադրման դյուրացման մասին համաձայնագրի դրույթների վրա, որոշ դեպքերում մերժում են վիզայի տրամադրումը առանց պատշաճ հիմնավորման: Նման դեպքերի մասին կա քաղաքացիների մի շարք բողոքներ, դժգոհություններ, այդ թվում հարցը բարձրացվում է նաև սոցիալական ցանցերում: Հատկապես հաճախ են լինում դեպքեր, երբ մերժում են երկարաժամկետ /մեկ տարվա/ բազմակի մուտքով վիզան, փոխարենը տրամադրելով ավելի կարճ ժամկետով վիզա /օրինակ՝ մեկ տարվա փոխարեն՝ 6-ամսյա/, ինչի մասին արդեն քիչ առաջ նշեցինք: 2014թ. ընթացքում ՀՀ-ում Շենգեն գոտու դեսպանությունները ընդհանուր առմամբ ստացել են վիզայի 52021 դիմում-հայտ, որից մերժվել է 5259 դիմում, որը կազմում է 10.1 %: Տրված 46757 վիզաներից 9134-ը կազմում են բազմակի մուտքի իրավունքով վիզաները, որը կազմում է 19.5 %[1]:

Մերժման դեպքերի ուսումնասիրությունը ավելի ամբողջական դարձնելու նպատակով հարցումներ են անցկացվել նաև մերժում ստացած քաղաքացիների շրջանում: 2015թ. հունվար-հուլիս ամիսներին մեզ են դիմել Շենգեն վիզայի մերժում ստացած 58 հոգի: Անցկացված հարցումների և ստացված դիմումների ընթացքում քաղաքացիները հիմնականում նշել են ՀՀ-ում գործող հյուպատոսությունների աշխատանքի, քաղաքացիների սպասարկման ընթացքում իրենց հանդիպած խնդիրների մասին: Քաղաքացիների կողմից ստացել ենք նաև բազմաթիվ դիմումներ հյուպատոսությունների կայքում հարցազրույցի համար առցանց գրանցվելու հետ կապված խնդիրների մասին /հատկապես ամռան ամիսներին/: Դեպքեր են եղել, երբ հյուպատոսությունը քաղաքացու անձնագրում մերժման մասին կնիք է դրել, ինչը չի թույլատրվում, կամ էլ ստացել են մերժում առանց մերժման պատճառների մասին գրավոր հիմնավորման, որոշ դեպքերում մերժման մասին ստացված գրավոր տեղեկացումը չի պարունակել կոնկրետ հիմնավորում, բազմաթիվ են եղել դեպքերը, երբ հայտնի հասարակական գործիչներ, գիտնականներ չեն կարողացել հերթագրվել և այլն: Էլեկտրոնային մամուլում ևս հանդիպել ենք մի շարք հրապարակումների, որոնք

[1] http://ec.europa.eu/dgs/home-affairs/what-we-do/policies/borders-and-visas/visa-policy/index_en.htm

անդրադառնում էին հյուպատոսությունների կողմից քաղաքացիների իրավունքների խախտման դեպքերին /մի դեպքում ԵՄ-ից համապատասխան պաշտոնական հրավերի առկայության դեպքում մերժել են նորածին երեխային՝ թույլատրելով միայն մորը, մյուս դեպքում մերժում է ստացել նախկին բարձրաստիճան պետական ծառայողը/: Կարևորելով Շենգեն վիզայի մերժման դեպքերի ուսումնասիրությունը և այդ հարցումները շարունակական դարձնելու նպատակով՝ ԳՏՀՎԿ-ի կայքում տեղադրվել է հայտարարություն, ըստ որի ՀՀ-ում ԵՄ անդամ-երկրների դեսպանությունների հյուպատոսական ծառայությունների կողմից մերժում ստացած քաղաքացիները կարող են մերժման մասին տեղեկատվություն տրամադրել հետևյալ էլեկտրոնային հասցեով՝ acgrcyerevanoffice@gmail.com, ինչը սակայն չի ենթադրում աջակցություն վիզայի ստացման հարցում, այլ կօգնի կատարել մերժման դեպքերի վերլուծություն՝ հետագայում ՀՀ-ում ԵՄ անդամ-երկրների դեսպանությունների հյուպատոսական ծառայությունների և ԵՄ կառույցների համար առաջարկություններ կազմելու հարցում:

Այդ իսկ պատճառով կարևորում ենք հետագայում ևս շարունակել հարցումներ անցկացնել հատկապես վիզայի դիմած, բայց մերժում ստացած քաղաքացիների շրջանում, քանի որ առանձին դեպքերում մերժումները լինում են առանց հյուպատոսությունների կողմից հիմնավորման, բացի դրանից կարևոր է նաև քաղաքացիներին տեղեկացնել մերժման որոշման բողոքարկման մեխանիզմների մասին:

Հյուպատոսական անձնակազմը պետք է հարգի մարդկային արժանապատվությունը՝ խտրականություն չդնելով մարդկանց միջև՝ նրանց սեռի, ռասսայական, էթնիկական պատկանելության, կրոնի, տարիքի ու սեռական կողմնորոշման հիման վրա: Հյուպատոսական անձնակազմի կողմից դիմողների իրավունքների խախտման դեպքում նրանք կարող են նաև բողոքել հյուպատոսարանի վերադասներին կամ տվյալ երկրի արտաքին գործերի նախարարությանը /շատ երկրների ԱԳՆ-երի նախարարությունների կայքերում հետադարձ կապի հնարավորություն է տրվում/: ՀՀ քաղաքացիներին խորհուրդ ենք տալիս նաև վիզայի հետ կապված հարցերով ուսումնասիրել Եվրոպան առանց վիզաների կոալիցիայի կայքը՝ www.visa-free-europe.eu, որտեղ հնարավորություն կա տեղեկացնել, բարձրաձայնել բողոքների ու դժգոհությունների դեպքերի մասին հետևյալ հղումով՝ http://visa-free-europe.eu/about-us/visa-whistle-blower/:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության միգրացիոն պետական ծառայություն

Այս ծրագրի շրջանակներում կատարված մոնիտորինգի մյուս մասը կազմում է ոլորտի համար պատասխանատու ներպետական մարմինների՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության (ԱՎՎ) և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության միգրացիոն պետական ծառայության աշխատանքի մոնիտորինգը: Սույն ծրագրին վերաբերող գործունեության ոլորտների ու գործառույթների շրջանակներում կազմվել են նաև հարցեր, որոնք պաշտոնական նամակների ձևով ուղղվել են համապատասխան կառույցների ղեկավարներին: Պետք է նշել, որ բավականին սեղմ ժամկետներում ստացել ենք պատասխան նամակները, որտեղ մանրամասն ներկայացվում են մեր բարձրացրած հարցերի պատասխանները:

Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն

Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությանը (ԱՎՎ) ուղղված հարցերն էին.

- Արդյո՞ք Հայաստանի բոլոր տարածքային անձնագրային բաժանմունքներն են հագեցված կենսաչափական անձնագրերի տրամադրման շարժական կայաններով:
- Ինչպիսի՞ն է ֆիզիկական սահմանափակ կարողություններ ունեցող մարդկանց համար կենսաչափական անձնագրերի տրամադրման կարգը և արդյո՞ք վերոհիշյալ անձանց համար ստեղծված են համապատասխան պայմաններ կենսաչափական անձնագրերի տրամադրման համար:

- Ինչքա՞ն կենսաչափական անձնագրեր են տրամադրվել 2014 թվականի և 2015 թվականի հունվարից հուլիս ընկած ժամանակահատվածում:
- Արդյո՞ք կա համագործակցություն ԵՄ համապատասխան մարմինների հետ փաստաթղթերի անվտանգության հարցում, կատարվու՞մ է կորած/գողացված անձնագրերի մասին տեղեկատվության փոխանակում, անձնագրերի նմուշների փոխանակում եվրոպական կողմի հետ:
- Արդյո՞ք անձնագրային բաժանմունքների աշխատակիցների համար կազմակերպվում են հակակոռուպցիոն սեմինարներ, վերապատրաստումներ, ինչը կնպաստի բարեփոխումների իրականացմանը:

Հաշվի առնելով վերջին տարիներում համակարգում իրականացված բարեփոխումները՝ կարևոր խնդիր է կենսաչափական անձնագրերի և նույնականացման քարտերի տրամադրման համար շարժական կայանների առկայությունը, հատկապես ինքնուրույն տեղաշարժվելու ունակություն չունեցող քաղաքացիների համար, ինչպես նաև հեռավոր ու սահմանամերձ բնակավայրերի բնակիչների համար /դա ԵՄ-ի պարտադիր պահանջներից մեկն էր/: ԱՎՎ-ի պատասխանից տեղեկանում ենք, որ ՀՀ բոլոր մարզերում (բացառությամբ Արարատի ու Արմավիրի, որտեղ սպասարկումն իրականացվում է ԱՎՎ-ում առկա կայանի միջոցով) գործում է մեկական, իսկ Երևանում՝ 2-ական շարժական կայան: Ներկայումս լեհական կողմի հետ բանակցություններ են տարվում մինչև 2015թ. տարեվերջ նոր սարքավորումներ ու շարժական կայաններ ձեռք բերելու համար: Անձնագրային բաժանմունքների տեխնիկական հագեցվածությունը կարևոր քայլ է փաստաթղթերի պաշտպանվածության, անձնական տվյալների պահպանման հարցերում և համապատասխանում են ԵՄ-ի տեխնիկական պահանջներին:

Անձնագրի տրամադրումն օրենքով նախատեսվում է 15 աշխատանքային օրում և գումարը կազմում է 25 հազար դրամ, սակայն, եթե քաղաքացիները ցանկանան կենսաչափական անձնագրեր ստանան ավելի արագ, ապա պետք է վճարեն լրացուցիչ գումար: ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի որոշման համաձայն՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ քաղաքացու անձնագիր կամ նույնականաց-

ման քարտ տալու կամ փոխանակելու համար լրացուցիչ վճարի չափը սահմանված է 20 հազար դրամ, երեք աշխատանքային օրում՝ 10 հազար դրամ[1]:

Կենսաչափական անձնագրերի տրամադրան կարգը կանոնակարգվում է «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով, ըստ որի կենսաչափական անձնագիրը պարունակում է տեխնիկական մաս՝ տվյալների պահոց, որտեղ ամրագրվում են սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված պարտադիր տվյալները, աջ և ձախ ձեռքերի ցուցամատների մատնադրոշմները: Երեխաների դեպքում մատնադրոշմները վերցվում են 6 տարեկանից, իսկ լուսանկարը փոխվում է անձնագիր տալու յուրաքանչյուր դեպքում՝ անկախ տարիքից: Լուսանկարվելն ու մատնադրոշմների հանձնելը կատարվում է ոստիկանության մարմնում, իսկ օտարերկրյա պետությունում՝ ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունում կամ հյուպատոսական հիմնարկում: Արևելյան գործընկերության երկրների և ԵՄ միջև անօրինական միգրացիայի կանոկարգման նպատակով ստեղծվել է մատնադրոշմների ընդհանուր համակարգ Եվրոդակ /Eurodac/, որի աշխատանքը կանոնակարգվում է Դուբլինյան կոնվենցիայով[2]:

«ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի և «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն անգործունակ ճանաչված քաղաքացուն նույնականացման քարտ և անձնագիր տրամադրվում է խնամակալի դիմումի համաձայն, սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացիների դեպքում՝ իր դիմումի համաձայն, առաջին խմբի հաշմանդամների դեպքում՝ ներկայացուցչի դիմումի հիման վրա՝ կցելով հաշմանդամության վկայականի նոտարով վավերացված պատճենը:

ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն պատասխանի համաձայն 2014թ. հունվար-հունիս ամիսների ընթացքում տրամադրվել է 198.104 նույնականացման քարտ և կենսաչափական տվյալներ պարունակող անձնագիր: 2015թ. նույն ժամանակահատվածում՝ 96.520 նույնականացման քարտ և 56.945 կենսաչափական տվյալներ պարունակող անձնագիր (այստեղ հաշվառված չեն տեղաշարժվելու իրավունք

[1] http://www.pastinfo.am/hy/node/39529#sthash.rc5gCrDF.dpuf
[2] http://eapmigrationpanel.org/page18357.html

չունեցող մարդկանց քանակը)։ Ինչպես տեսնում ենք, տրամադրված կենսաչափական անձնագրերի և նույնականացման քարտերի թիվը բավականին մեծ է և լուրջ ցուցանիշ է նման կարճ ժամանակահատվածի համար։ Չնայած նրան, որ կենսաչափական անձնագրերի տրամադրումը պարտադիր պահանջ չի հանդիսանում վիզայի տրամադրման դյուրացման և ռեադմիսիայի համաձայնագրերով այս փուլում, հետևաբար պարտադիր չէ, որ քաղաքացիները ունենան կենսաչափական անձնագրեր վիզայի տրամադրումը դյուրացնելու համաձայնագրից օգտվելու համար, սակայն դա պարտադիր պայման է վիզաների ազատականացման գործընթացի շարունակման համար։

Շատ կարևոր է, որ նույնականացման քարտերը և կենսաչափական տվյալներ պարունակող անձնագրերը համապատասխանում են ICAO-ի չափանիշներին և անցել են համապատասխան փորձաքննություններ։ Վերոհիշյալ փաստաթղթերի նմուշների փոխանակում է կազմակերպվում համապատասխան ընթացակարգերով։ Իսկ կորած և գողացված փաստաթղթերի մասին տվյալները տրամադրվում են ՀՀ Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյին։

Քաղաքացիների համար կարևոր ևս մեկ փոփոխություն է կատարվել. ս. թ. հուլիսի 8-ի Հայաստանի կառավարության որոշմամբ հաստատվել է ԱԳՆ-ի ներկայացրած այն դեսպանատների ու հյուպատոսությունների ցանկը, որոնք լիազորված են անձնագրեր տրամադրել կամ փոխել։ Ցանկում ներառված են Արգենտինայում, Բելառուսում, Բուլղարիայում, Բրազիլիայում, Մեծ Բրիտանիայում, Վիետնամում, Վրաստանում, Դանիայում, Եգիպտոսում, Հնդկաստանում, Ինդոնեզիայում, Իրաքում, Իրանում, Իսպանիայում, Իտալիայում, Ղազախստանում, Կանադայում, Չինաստանում, Քուվեյթում, Լիբանանում, Լիտվայում, Մեքսիկայում, Արաբական Միացյալ Էմիրություններում, Լեհաստանում, Ռումինիայում, Սիրիայում, Թուրքմենստանում, Շվեդիայում, Շվեյցարիայում ՀՀ դեսպանատները, ինչպես նաեւ Հալեպում, Բաթումիում, Մարսելում, Օդեսայում և Սոչիում ՀՀ գլխավոր հյուպատոսությունները։ Կենսաչափական անձնագրեր տրամադրելու անհնարինության դեպքում սովորական անձնագիր լիազորված են հատկացնել Ավստրիայում, Բելգիայում, Գերմանիայում, Հունաստանում, Նիդերլանդներում, Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Ուկրաինայում, Ֆրանսիայում, Չեխիայում ՀՀ դեսպանատները, ինչպես

նաեւ Լոս Անջելեսում, Դոնի Ռոստովում, Սանկտ Պետերբուրգում ՀՀ գլխավոր հյուպատոսությունները[1]:

Անձնագրային ծառայությունների աշխատակիցների համար բացի օրենսդրությամբ սահմանված վերապատրաստումներից, կազմակերպվում են նաև խորհրդակցություններ, աշխատանքային հանդիպումքննարկումներ՝ ներկայացնելու նոր ընդունված իրավական ակտերը և փոփոխությունները:

Կոռուպցիոն ռիսկերի նվազեցման, բարեփոխումների իրականացման ընթացքում էֆեկտիվության բարձրացման, տարածքի քաղաքացիների խնդիրներին ավելի սերտ առնչվելու նպատակով ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տարածքային անձնագրային ծառայությունների ղեկավարումը հանձնվել է ոստիկանության տարածքային մարմինների անմիջական ենթակայությանը, ինչը ևս կարելի է համարել աշխատանքում թափանցիկության բարձրացման ուղղությամբ դրական տեղաշարժ: Կարևոր է նաև, որ արտերկրի մեր հայրենակիցները Skype-ի միջոցով կարող են հարցեր ուղղել ոստիկանության ներկայացուցչին, մասնավորապես, ՀՀ քաղաքացիություն ստանալու, քաղաքացիությունը դադարեցնելու, ՀՀ քաղաքացու անձնագիր և նույնականացման քարտ ստանալու, փոխանակելու, ըստ բնակության վայրի հաշվառվելու, կացության կարգավիճակ ստանալու, ինչպես նաև անձնագրային և վիզաների վարչության գործառույթներին առնչվող այլ հարցերի վերաբերյալ:

Բարձր ենք գնահատում անձնագրերի և վիզաների վարչությունում իրականացված բարեփոխումները /քաղաքացիների սպասարկման բարելավում, տեխնիկական վերազինում, ավելի պաշտպանված փաստաթղթերի ներդրում և այլն/, սակայն կան նաև մի շարք հարցեր.

- Կենսաչափական անձնագրերի և նույնականացման քարտերի տրամադրման առաջին փուլում անձնագրային որոշ բաժանմունքներում մեծ հերթեր էին գոյացել, սակայն այժմ այդ հարցը գրեթե լուծված է:
- Կային դժգոհություններ անձնագրի համար կառավարության կողմից սահմանված պետական տուրքի չափի հետ կապված /հին

[1] http://news.am/arm/news/276004.html

նմուշի անձնագրերի համար այն կազմում էր 1000 դրամ, իսկ նորերի դեպքում՝ 25 հազար դրամ, այս դեպքում սակայն չկա անհրաժեշտություն վճարելու 1000-ական դրամ յուրաքանչյուր տարվա ելքի «կլոր» կնիքի համար: Տուրքի չափի հետ կապված խնդիրը առավել կսրվի, երբ կենսաչափական անձնագիրը դառնա պարտադիր Շենգեն վիզայի դիմելիս: Ցանկալի կլինի, որպեսզի այդ դեպքում սոցիալապես խոցելի խմբերի համար հատուկ մոտեցում դրսևորվի:

- Այժմ կենսաչափական անձնագիրը պարտադիր է նոր անձնագիր ստացողների համար, երեխաներին տրվում է հին նմուշի անձնագիր: Պահպանվել է նաև հին անձնագիրը ևս 5 տարով երկարաձգելու իրավունքը, սակայն այդ դեպքում չի թույլատրվում դիմել Շենգեն վիզայի համար: Վիզա երկխոսության անցնելու դեպքում կենսաչափական անձնագիրն արդեն կդառնա պարտադիր պայման:

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության միգրացիոն պետական ծառայություն

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության միգրացիոն պետական ծառայությանն ուղղվել են հետևյալ հարցերը.

- Կատարվում է արդյո՞ք ռեադմիսիայի համաձայնագրով նախատեսված կետերի կատարման վերաբերյալ ընդհանուր մոնիտորինգ:
- Խնդրում ենք ներկայացնել ռեադմիսիայի վիճակագրությունը համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո:
- Որո՞նք են այն կոնկրետ քայլերը, որոնք Հայաստանը պարտավոր է կատարել Հայաստան վերադարձված/վերադարձած ՀՀ քաղաքացիների համար, ինչպես նաև ոչ քաղաքացիների համար և ի՞նչ ծրագրեր են իրականացվում գործնականում:
- Պլանավորվում են արդյո՞ք ռեադմիսիայի համաձայնագիր կնքելու նպատակով բանակցություններ համաձայնագրի մաս չհանդիսացող երկրների հետ:

- Արդյո՞ք կնքվել են կիրարկող արձանագրություններ պայմանագրի մաս կազմող ԵՄ անդամ-երկրների հետ:

Ռեադմիսիայի և վիզաների դյուրացման գործընթացների փոխկապակցվածությունը անչափ կարևոր է ԵՄ-ի համար, այդ պատճառով դրանք ուժի մեջ են մտել միաժամանակ: Անօրինական միգրանտների վերադարձման ընթացակարգերը սահմանվում են յուրաքանչյուր ԵՄ անդամ-երկրի ներքին օրենսդրությամբ, իսկ ռեադմիսիոն համաձայնագրերը սահմանում են միայն վերադարձի միջպետական ընթացակարգերը: ԵՄ ռեադմիսիայի համաձայնագրի ուժի մեջ մտնելը, ըստ միգրացիոն ծառայության, դժվար թե հանգեցնի վերադարձվողների թվի էական աճի, այլ ընդամենը կկանոնակարգի վերադարձման ընթացակարգերը: Չնայած ընդունված է, որ անօրինական միգրանտների վերադարձման հետ կապված ծախսերը հոգում է ընդունող կողմը, սակայն Հայաստանի դեպքում, ըստ ռեադմիսիայի համաձայնագրի, անօրինական միգրանտների վերդարձման հետ կապված ծախսերը հոգում է ուղարկող կողմը:

ՀՀ Վարչապետի 2012թ. դեկտեմբերի 12-ի թիվ 1228-Ա որոշմամբ հաստատվել է «ՀՀ-ԵՄ հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրից բխող գործողությունների ծրագիրը, իսկ 2014թ. մարտի 19-ին հաստատվել է ՀՀ կառավարության 300-Ն որորշումը «ՀՀ և ԵՄ միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման մասին համաձայնագրի կիրառումն ապահովող միջոցառումների մասին»: Մասնավորապես, հաստատվել է նշված համաձայնագրի շրջանակում ստացվող դիմումները ՀՀ պետական մարմինների կողմից քննարկելու կարգը, համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության լիազոր մարմին է ճանաչվել ՀՀ միգրացիոն պետական ծառայությունը: Միգրացիոն պետական ծառայության պետի ղեկավարությամբ ստեղծվել է միջգերատեսչական խումբ, որի պարտականությունն է համաձայնագրով ստանձնած հանձնառությունների կատարման ընթացքի մոնիտորինգի իրականացումը և ծագող ընթացիկ խնդիրների քննարկումը:

Ռեադմիսիայի համաձայնագրով ՀՀ-ը պարտավորվել է քննարկել Եվրամիության անդամ պետության տարածքում առանց թույլտվության բնակվող ՀՀ, երրորդ պետության քաղաքացիների հետընդունման կամ տարանցման դիմումները և սահմանված ժամկետում՝ 2 աշխատանքային

օրից մինչև 12 օրացուցային օրը պատասխանել դրանց: Ըստ գործող կարգի անձը կարող է վերադարձվել առաջին մուտքի երկրից, ինչը շատ հաճախ բավականին դժվար է լինում բացահայտել:

Ռեադմիսիայի հայտը անցնում է հետևյալ ճանապարհը՝ /ՀՀ-ի կողմից վերադարձման գործընթացում ներգրավված 4 մարմիններն են՝ Միգրացիոն պետական ծառայությունը, Ազգային անվտանգության ծառայությունը, Ոստիկանությունը, Արտաքին գործերի նախարարությունը/ հայտը ստանում է միգրացիայի պետական ծառայությունը, որից հետո տեղեկացնում է ոստիկանությանը՝ ստուգելու հայտում նշված անձի ՀՀ քաղաքացի լինելու փաստը: Քաղաքացիության փաստի ճշտելուց հետո ոստիկանությունը պատասխանում է միգրացիոն ծառայությանը, որից հետո վերջինս տեղեկացնում է ԱԳՆ-ին, որպեսզի տվյալ երկրում գտնվող ՀՀ հյուպատոսական ծառայության ներկայացուցչություններին տեղյակ պահվի տվյալ քաղաքացուն վերադարձի փաստաթուղթ տրամադրելու համար, ինչպես նաև զգուշացնում է Ազգային անվտանգության ծառայությանը, որպեսզի կազմակերպվի սահմանի վրա քաղաքացու մուտքը Հայաստան: Որոշ դեպքերում ԵՄ երկրներում կարող է կազմակերպվել նաև հարցազրույց ՀՀ դեսպանության ներկայացուցչի մասնակցությամբ՝ նրա ՀՀ քաղաքացիությունը պարզելու նպատակով: Սակայն վերադարձման գործընթացը բավականին բարդ /այդ թվում նաև բյուրոկրատական/ գործընթաց է, ինչպես պրակտիկան է ցույց տալիս, անձի քաղաքացիությունը հաստատելուց հետո միշտ չէ, որ անձը վերադարձվում է:

Քաղաքացիների վերադարձը ավելի սահուն կազմակերպելու նպատակով ըստ միգրացիոն ծառայության տվյալների ռեադմիսիայի համաձայնագրից բացի անհրաժեշտ է բոլոր ԵՄ անդամ-երկրների հետ կնքել երկկողմ արձանագրություն վերադարձման ընթացակարգերի վերաբերյալ:

ՀՀ-ԵՄ ռեադմիսիոն համաձայնագրի շրջանակներում արդեն ստացվել են երկկողմ կիրարկող արձանագրություններ Էստոնիայից, Ֆրանսիայից, Լիտվայից, Լատվիայից, Լեհաստանից և Բենիլյուքսի երկրներից: Արձանագրությունների նախագծերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գտնվում են ներպետական համաձայնեցման փուլում:

Ինչպես նշվեց վիզաների տրամադրման դյուրացման և ռեադմիսիայի համաձայնագրերի իրականացման հարցերում չափազանց կարևոր է ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների կառավարման նախարարության միգրացիոն ծառայության դերակատարումը, որը հանդիսանում է ռեադմիսիոն համաձայնագրերի իրականացման հիմնական մարմինը: Միգրացիոն ծառայությունը ներգրավված է այդ գործընթացներում սկսած համաձայնագրերի տեքստերի մշակման փուլից, վերջացրած՝ դրանց իրականացման աշխատանքներով: Մինչ ԵՄ-ի հետ ռեադմիսիայի մասին համընդհանուր պայմանագրի կնքելը Հայաստանի Հանրապետությունը 2003 թվականից ի վեր կնքել է 10 համաձայնագրեր 13 պետությունների հետ, որոնցից 12 եվրոպական երկրների՝ Չեխիա, Նորվեգիա, Բելգիա, Լյուքսենբուրգ, Նիդերլանդներ, Շվեդիա, Գերմանիա, Բուլղարիա, Շվեյցարիա, Դանիա, Լատվիա, Լիտվա /համաձայնագրերի տեքստը տե՛ս http://smsmta.am/?menu_id=15/ և մեկ՝ ԱՊՀ երկրի /Ռուսաստանի Դաշնություն/ հետ:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն մեր հարցմանը պատասխանների համաձայն 2014 թ. ընթացքում ստացվել են 68 ռեադմիսիոն հայցեր՝163 անձանց վերաբերյալ, որոնցից 56-ը՝ Շվեդիայից, իսկ 12-ը՝ Լեհաստանից: 2015թ. առաջին կիսամյակում ստացվել են 61 ռեադմիսիոն հայցեր՝ 139 անձանց վերաբերյալ, որոնցից 46-ը՝ Շվեդիայից, 9-ը՝ Լեհաստանից, 4-ը՝ Բելգիայից, 2-ը՝ Բուլղարիայից: Ինչպես տեսնում ենք ռեադմիսիոն հայցերի առումով առաջատար է Շվեդիան:

Հետաքրքիր է, որ ըստ միգրացիոն ծառայության պաշտոնական տվյալների ՀՀ միգրացիայի միայն 10 տոկոսն է դեպի ԵՄ երկրներ: Հայաստանը ԵՄ-ում ապաստան խնդրող քաղաքացիների թվով մտնում է առաջին 10-յակի մեջ, իսկ որոշ երկրներում /Բելգիա, Ֆրանսիա/՝ եռյակի մեջ:

Այժմ ռեադմիսիոն համաձայնագրեր կնքելու նպատակով ընթանում են բանակցություններ ՀՀ-ի և Մոլդովայի, Ուկրաինայի ու Վրաստանի միջև:

Ռեադմիսիայի համաձայնագրի համատեքստում ոչ պակաս կարևոր է վերադարձած/վերադարձված անձանց Հայաստանում վերաինտեգրման հարցը: Այս առումով պետք է ևս մեկ անգամ անդրադառնալ պետության ու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից այդ ոլորտում «պարտականություններին»: Չնայած ռեադմիսիայի համաձայ-

նագրով սահմանված չեն որոշակի պարտավորություններ վերադարձած/վերադարձված քաղաքացիների վերաբերյալ, այդուհանդերձ, 2011թ. նոյեմբերի 10-ի ՀՀ կառավարության կողմից հաստատված «ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016թթ. գործողությունների ծրագրի» 8-րդ գերակա խնդրի (Օտարերկրյա պետություններից ՀՀ քաղաքացիների վերադարձի, ինչպես նաև հայրենիքում նրանց հետագա վերաինտեգրմանը ցուցաբերվող աջակցություն) իրականացման շրջանակներում ՀՀ կառավարությունը հաստատել է http://www.tundarc.am տեղեկատվական ինտերնետային համակարգի սպասարկման կարգը: Այս տեղեկատվական համակարգի միջոցով օտարերկրյա պետություններից Հայաստան վերադառնալու ցանկություն ունեցող անձինք իրենց հուզող հարցերով կարող են նաև դիմել պետական ծառայություններին և անգամ տեսակապի միջոցով ստանալ իրենց հուզող հարցերի պատասխանները:

Վերադարձվող միգրանտների համար «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքով ամրագրված են զբաղվածության կարգավորման 13 պետական ծրագրեր: ՀՀ կառավարության N534-Ն որոշմամբ վերադարձած անձինք համարվում են աշխատաշուկայում անմրցունակ անձինք և կարող են օգտվել զբաղվածության պետական ծրագրերից: Սակայն պետք է ճշտվի, թե ինչքանով են էֆեկտիվ այդ ծրագրերը և ինչքան մարդ է մասնակցել դրանց:

«ՀՀ-ի և ԵՄ-ի միջև Շարժունության շուրջ գործընկերության վերաբերյալ համատեղ հռչակագրի» շրջանակներում առաջին կիրառական ծրագրի՝ ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «Թիրախային նախաձեռնություն Հայաստանի համար» ծրագրի շրջանակներում Ներգաղթի և ինտեգրման ֆրանսիական գրասենյակը, ՀՀ ՏԿ ԱԻՆ միգրացիոն պետական ծառայության հետ սերտ համագործակցությամբ հիմնել է Վերաինտեգրման ուղղորդման կենտրոն, որի նպատակն է աջակցություն ցուցաբերել արտերկրից վերադառնալուց հետո Հայաստանում հաստատվելու հարցում: Ծրագրին կարող են դիմել ՀՀ այն քաղաքացիները, ովքեր առնվազն 1 տարի ապրել են եվրոպական որևէ երկում և վերադարձից հետո առնվազն կես տարվա ընթացքում դիմել են կենտրոն աջակցություն ստանալու համար: Կենտրոնում պահվում է Հայաստանում առկա վերաինտեգրման բոլոր ծրագրերի վերաբերյալ պարբերաբար թարմացվող տեղեկատվություն: Ստեղծվել է նաև վերաինտեգրման հարցերով ծրագրեր իրականացնող

ՀԿ-ների ու միջազգային կազմակերպությունների ֆորում, որում ընդգրկված են 11 կազմակերպություններ:

Անհամեմատելի ցածր է իրազեկվածության մակարդակը քաղաքացիների մոտ հենց ռեադմիսիայի վերաբերյալ, բայց այդ հարցը անչափ կարևոր է: Այս հարցերի մասին թեկուզ տարրական գիտելիքները մեր քաղաքացիներին կստիպեն ևս մեկ անգամ մտածել Հայաստանից անվերադարձ հեռանալուց առաջ:

Նման ծրագրերը ցույց են տալիս, թե Եվրոպական Միությունը որքան է կարևորում Հայաստանում միգրացիոն հոսքերի կառավարման հետագա զարգացումը: Դա ընդգծում է նաև այն մեծածավալ աջակցությունը, որը տրամադրվում է համապատասխան կառույցների կարողությունների հզորացմանը՝ միգրացիան կառավարելու և վերաինտեգրման գործընթացը դյուրացնելու նպատակով:

Վերադարձված անձանց վերաինտեգրման նպատակով իրականացվող ծրագրերն ու տրամադրվող աջակցությունը տարբեր են. այն կարող է կրել խորհրդատվական բնույթ, կարող է տրամադրվել որոշակի գումար՝ սեփական փոքր գործ սկսելու համար, կազմակերպել մասնագիտական վերապատրաստում, երեխաների ուսուցում, բժշկական աջակցություն և այլն: Նման ծրագրերը իրականացվում են պետության, միջազգային կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների կողմից և չեն կրում շարունակական բնույթ, մինչդեռ անհրաժեշտ է այդ անձանց տրամադրել տևական աջակցություն: Հակառակ դեպքում դա կարող է դրդել նրանց նորից արտագաղթել:

Վերադարձված անձանց և առհասարակ հասարակության շրջանում այս հարցերի վերաբերյալ իրազեկվածության բարձրացման համար կարևոր է տեղեկատվական նյութերի տպագրումը, տարածումը, տարատեսակ տեղեկատվական միջոցառումների կազմակերպումը: Այդ իսկ նպատակով էլ այս նախագծով Ծաղկաձորում իրականացվեց սեմինար լրագրողների համար, իսկ Վանաձորում ու Երևանում՝ տեղեկատվական միջոցառումներ, որոնց նպատակն էր հանրությանը ներկայացնել ոլորտում տեղի ունեցած փոփոխությունները: Այդ միջոցառումները ցույց տվեցին այդ հարցերում հանրության հետաքրքրությունը (դրա վառ ապացույցն է սույն ծրագրի շրջանակներում կազմակերպված միջոցառումների մասնակիցների թիվը) և տեղեկացվածության ցածր մակար-

դակը, ինչը ընգծում է նման միջոցառումների ու նախագծերի անհրաժեշտությունը նաև ՀՀ տարբեր շրջաններում:

Մենք բարձր ենք գնահատում սույն ծրագրի շրջանակներում միգրացիոն ծառայության համագործակցելու պատրաստակամությունը, միգրացիոն ծառայության ներկայացուցչի ակտիվ մասնակցությունը՝ Ծաղկաձորում կազմակերպված միջոցառմանը, մեր հարցումներին մանրամասն պատասխանելը, չնայած դեռ շատ անելիքներ կան միգրացիոն ոլորտում առկա խնդիրների լուծման հարցում:

Վերջաբան

Ինչպես արդեն նշվել է, վիզայի տրամադրումը դյուրացնելու և ռեադմիսիայի մասին համաձայնագրերը գործում են 2014թ. հունվարից: Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան կազմակերպության աջակցությամբ Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնի (ԳՏՀՎԿ) կողմից 2014թ. և 2015թ. Անցկացված մոնիտորինգները հնարավորություն են տալիս ուսումնասիրել երկու տարիների ընթացքում հավաքագրած նյութերը:

Սույն ծրագրի ընթացքում կատարված ուսումնասիրությունը և ձեռք բերված նյութերը թույլ են տալիս կատարել համապատասխան եզրակացություններ և ներկայացնել առաջարկներ: ԳՏՀՎԿ-ի նախաձեռնությամբ այդ առաջարկների մի մասը տեղ է գտել Ռիգայում սույն թվականի մայիսին կայացած քաղաքացիական հասարակության կոնֆերանսի վիզաների ոլորտին վերաբերող բաժնում[1]: Ստորև ներկայացնում ենք մեր ուսումնասիրության արդյունքում արված եզրակացություններն ու առաջարկները ըստ թիրախային խմբերի:

ՀՀ-ում ԵՄ անդամ-երկրների հյուպատոսական ծառայություններ

- ✓ Հյուպատոսական ծառայությունները պետք է ավելի հաճախ օգտվեն Շենգեն համաձայնագրերի ընձեռած հնարավորություններից՝ բազմակի մուտքի իրավունքով/երկարաժամկետ վիզաներ տրամադրելու նպատակով:
- ✓ Հյուպատոսությունները և վիզա կենտրոնները պետք է դիմորդներին տեղեկացնեն երկարաժամկետ վիզայի դիմելու իրենց իրավունքի մասին, եթե վերջիններս համապատասխանում են չափանիշներին: Երկարաժամկետ վիզաները /նվազագույնը 1 տարի ժամկետով/ պետք է դառնան սովորական երևույթ, այլ ոչ թե բացառություն: Այդ քայլը ևս իր հերթին կնպաստի միգրացիոն ռիսկերի նվազմանը:

[1] http://eap-csf.eu/assets/files/Recomendations-Riga-2015.pdf

- ✓ Հյուպատոսությունները պետք է խուսափեն միանգամյա կամ կարճաժամկետ վիզա տրամադրել Շենգեն վիզայի դրական պատմություն ունեցող դիմորդներին: Այս հարցը ևս շատ ենք կարևորում, քանի որ բազմաթիվ նման դեպքեր են գրանցվել այս 2 տարիների ընթացքում անցկացված մոնիտորինգի ժամանակ, երբ դիմորդը ստացել է ավելի կարճ ժամկետով վիզա, քան դիմել է, չնայած որ ներկայացրել է համապատասխան հիմնավորում և փաստաթղթեր:
- ✓ Երկարաժամկետ վիզաների ժամկետը պետք է կազմի առնվազն վեց ամիս, ինչպես դա նախատեսվում է Վիզա օրենսգրքի 24.2 հոդվածով:
- ✓ Հյուպատոսությունը չպետք է պահանջի երկարաժամկետ վիզաների դիմորդներից տրամադրել իրենց հաջորդող այցերի ճշգրիտ պլանը՝ դրանք արտացոլելով հրավերի մեջ: Դա վերաբերում է 1 տարի և ավելի վավերականության վիզաներին, քանի որ շատ դեպքերում գրեթե անհնար է նման հրավեր ներկայացնել և այդ իսկ պատճառով կարելի է ենթադրել, որ շատ հաճախ նման այցերի պլանները, մեղմ ասած, ոչ ճշգրիտ են:
- ✓ Փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները, հատկապես այն փաստաթղթերի, որոնք ուղարկվել են արտերկրից, պետք է ընդունվեն հյուպատոսությունների կողմից. դա չի մեծացնում փաստաթղթերի կեղծման հավանականությունը, սակայն էականորեն հեշտացնում և արագացնում է դիմորդի համար անհրաժեշտ փաստաթղթերի հավաքման գործընթացը: Որոշ հյուպատոսություններ հրաժարվում են ընդունել փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները կամ պատճենները /խոսքը հիմնականում վերաբերում է հրավերներին/:
- ✓ Հյուպատոսական ծառայությունները պետք է վիզայի համար դիմորդներին ընձեռեն ընտրություն անելու իրական հնարավորություն՝ դիմել արտաքին ծառայություն մատուցող կազմակերպություն կամ անմիջապես հյուպատոսություն:
- ✓ Քանի որ դեռևս շարունակում է լուրջ խնդիր մնալ հատկապես վավերականության երկար ժամկետ /1 տարի և ավելի/ բազմակի մուտքով վիզաների տրամադրման հարցը, կարևորում ենք ԵՄ

անդամ-երկրների կողմից վիզայի ստացման պահանջների և գործընթացների ներդաշնակեցումը:

- ✓ Հյուպատոսական ծառայությունները պետք է աշխատեն ավելի թափանցիկ՝ տրամադրելով վիճակագրական տվյալներ վիզայի համար ստացված դիմումների, տրամադրված վիզաների քանակի ու տեսակի, մերժումների մասին:

Հայաստանում գործող վիզա կենտրոններ

- ✓ Վիզա կենտրոններին կոչ ենք անում ավելի թափանցիկ աշխատել, չմերժել համագործակցության առաջարկները, քանի որ Միավորված վիզաների դիմումների կենտրոնը մեր հարցում-նամակներին որևէ կերպ չի արձագանքել:
- ✓ Վիզա կենտրոնների ընտրության հարցը ևս պետք է լինի ավելի թափանցիկ՝ հնարավորություն տալով նաև տեղական ընկերություններին մասնակցել մրցույթներին: Իսկ ընտրված կազմակերությունները պետք է խստորեն պահպանեն ՀՀ և ԵՄ-ի օրենքները, հատկապես, որոնք վերաբերում են անձնական տվյալների պահպանմանը և փաստաթղթերի անվտանգությանն ու տեղափոխման խնդիրներին /հաշվի առնելով վիզա կենտրոններից մեկում փաստաթղթերի կորստի դեպքը/:
- ✓ Հյուպատոսական բաժիններին և վիզա կենտրոններին առաջարկում ենք բարելավել իրենց տեխնիկական աշխատակիցների ընտրության և վերապատրաստման հարցը, այդ թվում դիմորդների հետ վարվելակերպի և սպասարկման հարցերում: Եթե դեսպանությունները ունեն այդ հարցը լուծելու հնարավորություններ և կարողություններ, ապա այդ հարցը շատ ավելի է սրվում ու կարևորվում վիզա կենտրոնների աշխատակիցների ընտրության հարցում /քանի որ բացի մասնագիտական գիտելիքից և հմտություններից, կան նաև փաստաթղթերի անվտանգության, պահպանման, տեղափոխման, վերադարձման հետ կապված հարցեր/: Այսպիսով, տեխնիկական աշխատակիցների ընտրության և վերապատրաստման հարցը մնում է վիզա կենտրոնների թույլ կողմերից մեկը:

- ✓ Հյուպատոսարանների և վիզա կենտրոնների հարցում կարևոր է նշել վերջիններիս տեխնիկական հագեցվածության հարցը վիզայի համար դիմող քաղաքացիների համար ստեղծված հարմարությունների ու պայմանների /հերթերի կազմակերպում, նստարանների առկայություն, արևից ու անձրևից պաշտպանվելու համար և այլն/ մասով:
- ✓ Հյուպատոսարանները և վիզա կենտրոնները պետք է շարունակեն քայլեր ձեռնարկել՝ մեծացնելու իրենց թողունակությունը հաշվի առնելով նաև սեզոնային գործոնը, քանի որ բողոքների մեծ մասը կապված է եղել առցանց հերթագրման խնդիրների հետ: Այդ խնդրի լուծման համար կարևորվում է հյուպատոսարանների և վիզա կենտրոնների տեխնիկական հագեցվածության, մարդկային ռեսուրսների ավելացման, հերթերի կազմակերպման և այլ հարցերը:
- ✓ Հյուպատոսարաններում և վիզա կենտրոններում հաճախ են դեպքեր գրանցվել, երբ մեծ հերթերի, ժամանակին հերթագրվելու անհնարինության, հավելյալ փաստաթղթեր ներկայացնելու անհրաժեշտության պատճառով տուժել են հատկապես վիզային դրական պատմություն ունեցող դիմորդները:
- ✓ Քանի որ հյուպատոսարաններում և վիզա կենտրոններում տրված անվճար վիզաների առանձին հաշվառում չի արվում, իսկ մարդիկ օգտվելով վիզա կենտրոնների ծառայություններից՝ վճարում են մատուցած ծառայությունների դիմաց, կարելի է եզրակացնել, որ վիզաների դյուրացման պայմանագրով քաղաքացիների որոշ կատեգորիաների համար նախատեսված անվճար վիզաներ տրամադրելու դրույթը թերի է գործում:

Եվրոպական Միություն

- ✓ Շատ կարևոր է, ինչպես արդեն նշել ենք վիզա երկխոսության առաջարկություններում, որ Եվրոպական Հանձնաժողովը իրավիճակի գնահատման համար իրականացնի վիզաների ոլորտի մոնիտորինգ՝ հաշվի առնելով մերժումների քանակը, սահմանին մուտքի արգելք ստացած քաղաքացիների քանակը, ԵՄ տարած-

քում անօրինական գտնվելու պատճառով վերադարձման մասին կայացված որոշումների և վերադարձված անձանց քանակը և այլն:

- ✓ Անչափ կարևոր է, որ Եվրոպական Հանձնաժողովը ապահովի հավելյալ վիճակագրական պարամետրեր՝ հնարավորություն տալով ավելի լավ գնահատել Վիզա օրենսգրքի պահանջների կատարումը և բազմակողմանի վերլուծել վիզաների մասին տվյալները:
- ✓ ԵՄ-ին և ՀՀ-ում ԵՄ երկրների հյուպատոսական ծառայություններին առաջարկում ենք հատկապես ուշադրություն դարձնել մերժումների դեպքում բողոքարկման գործընթացներին՝ ապահովելով որոշման վերանայման ավելի թափանցիկ և պարզեցված գործընթաց, ինչը հնարավոր կդարձնի բողոքարկողներին ստանալ պատասխան խելամիտ ժամկետներում: Բողոքարկման արդյունքում փոխված որոշման քանակի մասին չկան տվյալներ, ինչը թույլ կտար անել եզրակացություններ բողոքարկման գործընթացների էֆեկտիվության մասին:

ՀՀ քաղաքացիները և ՀՀ պետական մարմինները

- ✓ ՀՀ քաղաքացիները, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները, ինչպես նաև ՀՀ պետական մարմիններն յուրաքանչյուրն իր հերթին պետք է հետամուտ լինեն այդ ոլորտներում բարեփոխումների իրականացման հարցում:
- ✓ Վիզայի դիմող քաղաքացիներին կոչ ենք անում ավելի լուրջ մոտենալ վիզայի համար անհրաժեշտ փաստաթղթերի կազմման և հավաքման հարցին, իսկ վիզա ստանալուց հետո զերծ մնալ փաստաթղթեր փոխելուց, որոնք հիմք են հանդիսացել վիզայի տրման /օրինակ, այցելության երկիրը փոխել/, քանի որ նման դեպքերում վիզան կարող է չեղյալ համարվել կամ էլ արգելվի մուտքը սահմանային կետում:
- ✓ Առաջարկում ենք հասարակության շրջանում այս հարցերի վերաբերյալ իրազեկվածության բարձրացման նպատակով կազմակերպել տարատեսակ տեղեկատվական միջոցառումներ, իրականաց-

նել տեղեկատվական նյութերի տպագրում և տարածում: Այս առաջարկը հատկապես վերաբերում է վիզաների, միգրացիայի ոլորտներում ակտիվ հասարակական կազմակերպություններին:

- ✓ ՀՀ-ի պետական մարմիններին առաջարկում ենք շարունակել կազմակերպել պատասխանատու իրենց աշխատակիցների համար սեմինարներ, փորձի փոխանակման այցեր, վերապատրաստման ծրագրեր և այլն:

ՀՀ-ԵՄ հարաբերությունների շրջանակներում խոսելով վիզաների և միգրացիայի ոլորտների մասին՝ պետք է հաշվի առնել միգրացիայի ոլորտում ԵՄ-ում 2015թ. ստեղծված իրավիճակը, դեպի ԵՄ տարածք այս տարվա ընթացքում միգրացիոն աննախադեպ հոսքերը: ԵՄ Frontex (the European Agency for the Management of Operational Cooperation at the External Borders of the Member States of the European Union) սահմանապահ գործակալության տվյալներով այս տարվա սկզբներից ԵՄ-ի սահմանը հատել են ավելի քան 750 հազար միգրանտներ[1]: Սեպտեմբեր-հոկտեմբեր ամսիներին միգրանտների հոսքը սկսել է թուլանալ /սեպտեմբերին ժամանել են մոտ 170 հազար միգրանտներ, ինչը ավելի քիչ է, քան օգոստոսին՝ մոտ 200 հազար/ և դա այն դեպքում, երբ 2014թ. ԵՄ են ժամանել միայն 280 հազար մարդ: Այս իրադարձությունների ֆոնին ԵՄ անդամ-երկրները սկսեցին խոսել միգրացիոն քաղաքականության վերանայման, Շենգեն կանոնների խստացման, Շենգեն գոտու ներսում տեղաշարժման կանոնների փոփոխության և այլ կտրուկ քայլերի անհրաժեշտության մասին: Եվ դրանով պայմանավորված եվրոպացիների մոտ /ինչպես սովորական քաղաքացիների, այնպես էլ քաղաքական գործիչների շրջանում/ նկատվում է ծայրահեղական տրամադրությունների սրում, ինչը կարող է վիզաների դյուրացման, ազատականացման հետագա գործընթացում առաջընթացը դնել հարցականի տակ: Այս իրավիճակում ազատականացման հետագա գործընթացի ջատագով ԵՄ երկրներն ու այդ քաղաքականության աջակիցները կկազմեն փոքրամասնություն: Այդ իսկ պատճառով Հայաստանի քաղաքական գործիչների,

[1] http://frontex.europa.eu/news/710-000-migrants-entered-eu-in-first-nine-months-of-2015-NUiBkk

արտերկրում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության ակտիվ խմբերի կողմից պահանջվում է շարունակել ակտիվ աշխատել եվրոպական երկրներում հասարակական կարծիք ձևավորող թիրախային խմբերի, տվյալ ոլորտում քաղաքացիական հասարակության ակտիվ կազմակերպությունների հետ՝ քաղաքական որոշումներ կայացնողների վրա որոշակի կերպով ներազդելու համար: Պետք է շարունակել աշխատանքը և ապացուցել, որ խիստ վիզային ռեժիմը միգրացիայի վերահսկման հարցում այնքան էլ էֆեկտիվ գործիք չէ, և Հայաստանի և ԵՄ-ի միջև առանց վիզայի հնարավոր ռեժիմը ապագայում իրենից վտանգ չի ներկայացնում ԵՄ անդամ-երկրների համար:

Կարևոր է, որ ՀՀ քաղաքացիները տեղյակ լինեն նաև, որ կա վիզաների հարցերով զբաղվող միջազգային կոնսորցիում: Դա Եվրոպան առանց վիզաների կոնսորցիումն է, որը վիզաների հարցերով զբաղվող Արևելյան գործընկերության անդամ-երկրների հասարակական կազմակերպությունների կոնսորցիում է[1], որի անդամ է նաև Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնը[2]: Վերոնշյալ կոնսորցիումը տարիներ շարունակ կարևոր գործունեություն է ծավալել այդ ոլորտի մոնիտորինգի, հաշվետվությունների, առաջարկների և այլ տեսակի նախաձեռնությունների ձևով:

Այս ամբողջ աշխատանքը ցույց տվեց, որ, իհարկե, կա առաջընթաց, կատարվում է մեծ ծավալի աշխատանք ԵՄ և ՀՀ-ի կողմից, սակայն միաժամանակ պետք է նշել, որ անհրաժեշտ է շարունակել ակտիվ աշխատանքը այդ ուղղությամբ, խորացնել համագործակցությունը այդ ոլորտում: Հյուպատոսարանների աշխատանքի առավել խոր և համապարփակ համեմատական վերլուծություն կատարելու համար շարունակել նաև վիզայի մերժում ստացած դիմողների հարցումներ: ԳՏՀՎԿ-ի կայքում մերժումների մասին տեղեկությունների հավաքագրման վերաբերյալ տեղադրված հայտարարությունը մերժում ստացած դիմորդների համար կդառնա ևս մեկ միջոց՝ բարձրաձայնելու խնդիրների և բողոքների մասին:

---

[1] http://visa-free-europe.eu/

[2] http://acgrc.am/

Ամփոփելով Եվրոպական Միության և Հայաստանի Հանրապետության միջև վիզայի տրամադրումը դյուրացնելու և առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին համաձայնագրերի կիրառման ուսումնասիրությանը նվիրված սույն աշխատանքը՝ գալիս ենք այն եզրակացության, որ անհրաժեշտություն կա մեր ուսումնասիրությունը դարձնելու շարունակական և ավելի ընդգրկուն:

ՀՂՈՒՄՆԵՐ

- ՀՀ արտաքին գործերի նախարարություն՝ http://www.mfa.am/hy/
- ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության միգրացիոն պետական ծառայություն՝ http://smsmta.am/
- Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն՝ http://www.passportvisa.am/
- Հայաստանում Գերմանիայի դեսպանություն՝ http://www.eriwan.diplo.de/
- Հայաստանում Իտալիայի դեսպանություն՝ http://www.ambjerevan.esteri.it/Ambasciata_Jerevan
- Հայաստանում Ֆրանսիայի դեսպանություն՝ http://www.ambafrance-am.org/
- Հայաստանում Լիտվայի դեսպանություն՝ http://am.mfa.lt/
- Հայաստանում Լեհաստանի դեսպանություն՝ http://erywan.msz.gov.pl/en/
- Հայաստանում Հունաստանի դեսպանություն՝ http://www.greekembassy.am/
- Հայաստանում Չեխիայի դեսպանություն՝ http://www.mzv.cz/yerevan
- Հայաստանում Բուլղարիայի դեսպանություն՝ http://www.mfa.bg/embassies/armenia/setlang/en
- Հայաստանում Ռումինիայի դեսպանություն՝ http://erevan.mae.ro/en
- Եվրոպական Միություն՝ http://europa.eu/index_en.htm
- Արևելյան գործընկերություն՝ http://eeas.europa.eu/eastern/index_en.htm
- Միգրացիայի և ապաստանի հարցերով կոմիտե՝ http://eapmigrationpanel.org/page19891.html
- Եվրոպան առանց սահմանների կոնսորցիում՝ http://visa-free-europe.eu/
- Բաց հասարակության ինստիտուտներ- հիմնադրամ՝ http://www.osf.am/?lang=am

- Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոն՝ http://arm.acgrc.am/
- Հայաստանում Հունաստանի վիզային կենտրոն՝ http://www.vfsglobal.com/greece/armenia/
- Հայաստանում Լիտվայի վիզային կենտրոն՝ http://www.vfsglobal.com/lithuania/armenia/Armenian/index.html
- Հայաստանում Իտալիայի վիզային կենտրոն՝ https://www.tlscontact.com/am2it/login.php
- Եվրոպական Միության և Հայաստանի Հանրապետության միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագրի տեքստը՝ http://www.mfa.am/u_files/file/EU_AM_VFA_am.pdf
- Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին համաձայնագրի տեքստը՝ http://www.mfa.am/u_files/file/Agreement_EU_Readmissiom_Arm.pdf
- Հայաստանի և Եվրոպական Միության միջև սիմետրիկ /համաչափ/ առանց վիզայի ռեժիմի ճանապարհային քարտեզի կազմման ու իրականացման համար առաջարկությունների տեքստը՝ http://www.acgrc.am/publications.html; http://visa-free-europe.eu/wp-content/uploads/2015/08/Road-Map-to-the-Symmetrical-Visa-Free-Regime-between-the-EU-and-Armenia.pdf

Մոնիտորինգի հաշվետվություն

Համաձայնագիր Եվրոպական Միության և Հայաստանի Հանրապետության միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին (երկրորդ մոնիտորինգ)

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Թումանյան 12
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

EDIT PRINT
12 Toumanyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am